



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

LTn
✓ 1589

1999

43905-4-2

ԱՆԻՍՍ ՄԱՐԳԱՐԻՏ



ՅՕՐԻՆ ԵԱՑ

ՂԵՒՈՆԴ ԲԱԶԱՆԱՅ ԵՒՐՈՅԵԱՆՑ ՎԱՆՅԻ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ


Ս. ՄԻԲԱՅԼԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ՈՒԶԱՐԵ ԶԱՐԵԻ ԳՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՆԻՐԱՆ

ՎԵՐ ԳՐԱԿ ՔՈՒՆ 43

— 1875 —

ԱՆԻՑՍ ՄԱՐԳԱՐԻՏ



ՅՕՐԻՆԵԱՅ:



ՂԵԻՈՆԳ ԲԱՀԱՆԱՅ ՇԻՐՈՑԵԱՆՆՅ ԿԱՆՑԻ

1717.



Ի Կ . ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս . ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1875



28099-62

2



Ի ՅԱԼԷՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱԶՆՈՒԱԶԱՐԲ ԵՆՈՂԱՅ ԻՒՐՈՅ

ՀՕՐՆ ՅԱԿՈՐԱՅ ՄԱՆՈՒԷԼԱՆ

ՄՕՐՆ ՄԱՐԻՍՄ ՏԻԿՆՈՋ

ԵՂԲԱՐՑՆ

ՄԱՆՈՒԷԼԻ, ԳՐԻԳՈՐԻ, ՕՆՆԻԿԻ

ՔԵՐՑՆ

ՄԱԶՐՈՒՀԵԱՅ, ԳԱՅԵԱՆԵԱՅ, ՍՈՓԵԱՅ,


Ի ՏԻՐ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ

ԿԱՆԳՆԷ

ՄԱՀԱՐՉԱՆ

ԶԱՅՍ ՄԱՅԵԱՆ

ՄԿՐՏԻՉ Յ. ՄԱՆՈՒԷԼԱՆ



1589-60

ՀԲ. 1595

9

Ո Ւ Ղ Ե Ր Ձ

ԱՌ ԱԶՆԻԻ ԲԱՐԵՐԱՐՆ

Գ . ՄԿՐՏԻԶ ՎԵՆԵՐՈՒՆԻ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Ապարէն ինձ Մեկենաս հանդիսացար ո՛ր Պայաղատ ,
Մեծանուն գերդաստանէ և բարեպաշտ ընտիր զարմէ
Շառաւիղ առաքինի և հետևող հարցդ շաւղաց .
Մանուէլեան աղնուաղարմ՝ Տո՛ւմէն ընձիւղ վսեմ՝ ,
Արդարև արժանաւոր որ Ծնողիդ բերեալ տիպար ,
Զձեռամբ կալեալ հիբոյս բերկրեալ յուսով սիրօրհեցիր
Ո՛չ թէ Լ՛իկ և եթ բանիւ այլ նիւթապէս պինդ կազ-
դուրեալ ,
Կիւթթէմպէրկեան գիւտովն անդոյգ զայս խուն վաս .
տակ և թերահաս ,
Ի լոյս ածել յօժարեցար , մանկտոյն Հայկոյ տալ ՚ի
դրօսանս :
Բարէ՛ աստէն զի՞նչ տրիտուր քեզ հատուցից ես ա-
պիկարս ,
Որ չունիմ գէթ և ոչ ինչ . այլ ՚ի սրտէ մաղկթանս
կանխեալ

Երեկ անուանքն՝ որ զմահարձանսն կանգնեալ 'ի տա-
 ւրս իմ տաղից ,
 Ոսկեքանդակ նկարեսցին յերկնից կայանս անջնջելի :
 Եւ մինչ Արեգն յերկնից կամարն լուսափայլի հաս-
 տառապէս ,
 Կեցոյ՛ տղիք զարդ Հայրենեաց , հանդերձ Տո՛ւ-
 միւրք մշտապանձ :

ՀԵՂԻՆԱԿՆ



Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Հասարակաց առած է «ամեն ճախորդութեանց վերջը յաջողութիւն է» . արդարեւ սափկաց անու-
 րանալի ճշմարտութիւն մ'է՛ մենք իսկ տեսած եմք
 մեր օրերով՝ որ շատ աղքատներ իւրեանց տառա-
 պելի չքաւորութենէն աղատուելով հարուստ եղած
 են , շատ անտանելի հիւանդութիւն կրող անձինք ,
 միւսանգամ առողջութեան և կենաց օրեր վայելած
 են , և շատ շղթայակիր անմեղ բանասարկեալներ
 դրսարտութեամբ 'ի մահ դատապարտուած , բայց
 'ի վերջոյ Աստուածային արդարութեամբ ազատուած
 աշխարհիս փրայ ուրախութեան և զուարճութեան օ-
 րեր անցուցած են :

Անիստ Մարգարիտն՝ որ գրուածքիս բուն ա-
 ոարկան է , իւր տաննէհինգ ամեաց ծաղիկ և փա-
 փուկ հասակէն սկսեալ , գրեթէ մինչև քսաննէհինգ
 ամ , անտանելի թշուառ և մահառիթ վշտեր կը-
 րած է՝ իւր անագորոյն մօր և նորա անչնորհք Եւ-
 նօֆիկ ծառային դրսարտութեամբ բայց Աստուծոյ
 շնորհիւ դարձեալ իւր առաջի ունեցած բարեբաղդ
 երջանիութեան կը հանդիպի :

Սորա անհամեմատ բարեբաղդութիւն , փոր-
 ձանաւոր կեանք , առաքինի փորք , և երջանիկ վախ-
 ձանք գրքոյիս ստանաւոր շարայարութեամբ կը պատ-
 մէ տեղ տեղ ալ բանաստեղծական և բարոյական
 տաղեր մէջ բերելով :

Մարգարիտոս թագաւորի դուստր , թագաւորի քոյր . վերջն ալ Սպարապետի հարս , իւր հօր և եղբարց սիրոյ առտրկայ , ընտրելի քան զսկիանս սրտաւականս , սլաշտելի յաւերժաշարան և նախանձելի ամենայնի : Սորա գեղն ու փայլելութիւն , մեծ յոյս ու համբերութիւն առաքինութեան և աստուածսպաշտութեան ոգին , ուսումնասէր ընթերցող հայ մանկուներ պիտի ճանաչեն , զգան , սիրեն և գրաւուն իւրեանց օրինակ առնելով դոյն :

Փորձութեան համբերութիւն . յուսոյ հաստատութիւն , և ուրախութեան առիթ , սոյն Գրքոյի , արդարև մեր մտաւորական չափէն աւելի բարձր էր գրելն , սակայն մեր Մեծադատիւ Բարեբարի անյագ ցանկութիւնն , և ամենօրեայ քաջալերութիւն գրեթէ մեզ նոր սիրտ նոր հօգի տալով զօրացուցին , սկսեցինք , գրեցինք և Հոգւոյն Սրբոյ օժանդակութեամբ 'ի գլուխ հանենք , թէև խակ կերպով : Ասպարէն իմ տղիտութիւնս արդէն հրատարակաւ խոստովանելով , կ'աղաչեմ և կը խնդրեմ՝ համազգայիններէս որ ներող լինին խուն վաստակիս սխալմանց , որովհետև ցաւերուս բազմապատկութիւնը ոչ թէ միայն արտաքին կացութիւնս այլև գաղափարս անգամ շխիթած են : Յուսամք պիտի ներուի մեզ և եթէ շատ լաւ չէ , գոնէ բաւական ընդունելութիւն գտնելով քաջալերուինք 'ի հօգի և 'ի մարմին , աղօթելով ողջ Սիրելի Ազգիս բարեկեցութեան և վերականգանութեան :

Մեամ Պանդուխտ Վանեցի

ԴԵՒՈՒԳ ԲԱՆԱՆԱՅ ՇԻՐՈՅԵԱՆՑ

ԱՆՍՈՍ ՄԱՐԳԱՐԻՏ

ԴՐՈՒԱԳ ԱՌԱՋԻՆ

Աւագ եղբայրն իմ Զօրիտս ,
Օր մը կանչեց , « Սրի իմ քուլս ,
Մարգարիտա իմ աղնիւ քոյրս ,
Դու արժանի իմ սուրբ սիւղոյս :
Շատ սիրելի ես գեղեցիկ ,
Երեք եղբարցս միայնիկ ,
Անդիպատ և մէկալ Մանկիկ ,
Քեզ կը սիրեմք անուշ քուրիկ :
Ականչըդ բաց , մատաղ քոյր իմ ,
Լսէ՛ ինձի , թէ ի՛նչ խօսիմ ,
Փոխան սիրոյ մեր կաթողիկն ,
Կուզեմ ահանչ տաս իմ բերթին :
Աչքըդ բացիր աշխարհ տեսար ,
Որոշ կերպով բանմ՝ չ'զխացար ,
Որովհետև մանուկ տղայ ,
Խեղք չունեցող էակ կըլլայ :

Ինչ առարկայ որ տեսնայիր ,
 Շուտ մը սիրով կը գրկէիր ,
 Սո՛ւր , Հո՛ւր , այլ ինչ փաստակար ,
 Եւ ո՛չ մէկէմ՝ վախ ունէիր :
 Այն ինչ թո՛թով լեզուդ բացուաւ ,
 Կարճ ու խառնակ խօսք սկսաւ ,
 Ծնողքս եղբարքս ուրախացանք ,
 Քեզ գիրի ընդ գիրի առինք տուանք :
 Որովհետեւ տղայութիւն ,
 Երբէք չըզգար խոր տրտմութիւն ,
 Բաւական էր փորդ կուշտ լինէր
 Կը սիրէիր խաղ զուարճութիւն :
 Եթէ մէկ քեզ յանդիմանէր ,
 Չը պահէիր ռի 'ի սրտիդ ,
 Սակայն տակէն կը նայէիր ,
 Խոժտու դէմքին կը դիտէիր :
 Իսկ երբ ծիծաղերես փայլուն ,
 Քեզի նայէր մէկ սիրագոյն ,
 Արդէն ուրախ կայտառ զուարթ :
 Կը թռչտէիր ինչպէս թռչուն :
 Ասոր համար մեր Տէր Յիսուս ,
 Կեցուցիչ և Փրկիչ հոգւոյս ,
 Չայն կարճակէ ժողովրդեանն ,
 Արարածոցըս Յոյս և Լոյս :

« Իրաւ կըսեմ ձեզի , մա՛րդիկ ,
 Թէ որ չդառնար լինիք մանկտիք ,
 Սրքայութեանս անմահ փառքէն ,
 Ամենեւին բաժին չունիք » :
 Եւ թէ . « Թոյլ տուք մանկտիներուդ ,
 Ինծի դալու մի՛ արգելուք ,
 Չի երկնից Սուրբ արքայութիւն ,
 Դոյս բաժինն է լուարուք » :
 Մինչ որ եղար հինգ տարեկան ,
 Քեզ տեսողաց զարմանք կալան ,
 Քանզի էիր խիստ գեղեցիկ ,
 Լեզուդ անուշ և քաղցրաբան :
 Հասակակից մանրիկ Մանկունք ,
 Քեզ կուգային դրացիներէն ,
 Խաղալ ցնծալ և զուարճանալ ,
 Կը պարէիր ամենքդ մէկէն :
 Խումբ կաղմէիք դառանց նըման ,
 Ի դալարիս է՝ ի բուրաստան ,
 Եւ մանկական ձեր երգերուն ,
 Կը միանար Սոփակին ձայն :
 Առաւօտեան սիւգն անուշիկ ,
 Եւ հայրենեաց օդ գեղեցիկ ,
 Կը ծծէիք ցյաֆ ցյաֆ ,
 Բնութեան անունդ բարեկեցիկ :

Այն ինչ մեղուն կը թռչտէր
Եւ թիթեռնիկ կը ոստոստէր,
Դուք գնալով ստիկ ստիկ,
Բռնել ուղէք, բայց նա թռչէր:

Մինչ Արեգակն մօրմէն ծնէր,
Լուսաճաճանչ շող արձակէր,
Չեղ և բնութիւնըն համօրէն,
Իր տաքութեամբ ջեռուցանէր:

Այն ինչ Դառնուկք արածէին,
Դաշտերու մէջ ցաթկուտէին,
Դուք վազելով անոնց ետին,
Վեր թռնելով փախուստ տային:

Մինչ ձեռք ձեռքի մէջ անցուցած,
Կը կայտուէիք զուսրճացած,
Կը քալէիք շարան շարան,
Չեղ տեսնողներ մնային ապշած:

Կ'անցնէիք դուք դաշտերէն,
Փունջ կապէիք ծաղիկներէն,
Չարդարէիք ձեր գըլլիւրներ,
Աղբիւրներու ահանց վերէն:

Երբ այդիին մօտ հասնէիք,
Քաղցր ու աղուոր միրգ քաղէիք,
Տանձ ու Խնձոր, մեղրիկ Խաղող,
Կը կըճէիք, կը ղարնէիք:

Ապա հօտով կամիր Վարդեր,
Փրցունէիք կայծած քովեր,
Կը փընջէիք ընկեր ընկեր,
Ապա ամեն մէկ իր տունները:

Մեք արտասուքս գալստեան,
Իմ գիրկը քեզ հանգստարան,
Անդիպատ ու Մանկիկ եղբայրս,
Կը մընայինք քեզ կարօտեալ:

Այն օրերէն մինչև հիմայ,
Թիւ կենաց քոց տասնհինգ ամեայ,
Եղաւ բարեաւ ուրախութեամբ,
Շատ ապրիս դու շատ բաղձամեայ:

Հասակդ է Սօսեաց նըման,
Գեղեցկութիւնդ յոյժ աննման,
Խելքդ գլուխդ եկաւ հասաւ,
Քեզ պատմութեան խրատ կարգամ:

Քո մանկութեան թանկ վայրկեններ,
Անյագ ձորին մէջ գըրբուան,
Անցեալին մէջ կըթութիւններ,
Երբէք անձինդ ինչ կ'ազդեցան:

Իսկ ներկայիւս ինչ որ լսես,
Գաղափարիդ մէջ զետեղես,
Որովհետեւ չարն ու բարին,
Անշուշտ դիտես, կը որոշես:

Անդրիա հայր մեր թագաւոր ,
 Երգում տուաւ մեզ ահաւոր ,
 Կտակ եթող մեզ հաստատուն ,
 Եւ զայն կըրկնէր մեզ օրն 'ի բուն :

Ճաշէն յետոյ զքեզ սիրել ,
 Եւ գրկաց մէջն առնել փարել ,
 Ահա եղբարքդ մեք հաւասար ,
 Այս յիշատակ պաշտեմք խպառ :

Անագորոյն մահն անգութ ,
 Մեր հօր կեանքը հնձեց ընդ փոյթ ,
 Եթող զիս իւր գահուն ժառանգ ,
 Որ մինչև ցարդ տէրամբ մընամբ :

Այս աշխարհիս միջի փառքեր ,
 Եւ ունեցած նանիր զարդեր ,
 Ոսկի արծաթ և կալուածներ ,
 Ձի գրաւեցին մերին սրտեր :

Թագաւորութիւն և զօրութիւն ,
 Իշխանութիւն ու մեծութիւն .

Ասոնք ոչինչ են մեր աչքին ,
 Ձի չունին միշտ հաստատութիւն :

Մենք կը պաշտենք այն սուրբ Պատգամ ,
 Որ Մովսէսի ձեռամբ տուան ,
 « Լուր Իսրայէլ քո Տէր Աստուած ,
 Տէրը մի է միշտ յաւիտեան » :

Պիտի սիրենք մենք բոլորով ,
 Սրտիւ մտօք և սուրբ հոգւով ,
 Ձայն , ինչպէս որ՝ Նա մեզ սիրեց ,
 Իւր Միածին մեզ չանխայեց :

Ուստի սլարտական եմք կամովին ,
 Սիրել ըզնա զգացմամբ 'իլին .
 Հուսկ հետոյ այս անցաւորիս ,
 Պարկեշտ իրեր , որ կը լինին :

Աստուծմէ ետք քեզ կ'սիրեմք ,
 Մեր Հօր կըտակ կը կատարեմք ,
 Երեկոյէ մինչ երեկոյ ,
 'Տի գաս սիրել և սիրուելու :

Այնուհետեւ , քուրիկ սիրուն ,
 Պիտի նստիս գահուս վըրան ,
 Իմ ծառաներս , աղախիներս ,
 Ինձ հաւասար պաշտելու դան » :

ԴՐՈՒԱԳ ԵՐԿՐՈՐԴ

« Պատուական քոյր իմ, ի՛նձ լսիր,
Աստուծոյ Սէր դու ըստացիր,
Սրտիդ խարոյկին մէջ վառէ,
Այն սուրբ Սիրով երջանկացիր:

Զանա՛ յաղթել այս աշխարհի,
Կերպ կերպ կրից որ պատահի,
Առաքինեաց ասպարէզին,
Գալէ կտրիճ քաջ և արի:

Զխոսս երբէք թոյլ կրից մեղաց,
Որ բռնանայ վեր քոյ կամաց,
Զի որ սիրող ախտից չարաց,
Այն հեռու է երկնից փառաց:

Պարկեշտութիւն քեզ քօղ ըրէ,
Խոնարհութիւն դու շատ սիրէ,
Զի որ խոնարհ լինի հոգւով,
Յիսուս ըզնա բարձրացունէ:

Մ՛ըսեր դուստր եմ թաղաւորի,
Գոյր եմ յաղթող Զօրիոսի,
Թէ որ այսպէս հպարտանաս,
Բեւխարէն ալ վար կլինաս:

Օր մի կուգայ, օր մի յանկարծ,
Կենացըդ թել կտրէ ՚ի բաց,
Այն օր, վայրկեանը ո՛չ ո՛ք գիտցաւ,
Ուստի պէտք է պատրաստ մընաս:

Արթուն հոգւով, աղօթելով,
Բեզի ճնշէ Պահքով Մոմով,
Խոստովանիլ Հաղորդելով,
Որ ճիշտ գնաս Աստուծոյ քով:

Դարձեալ Փրկչին քարոզ լսէ՛,
« Մաղ մի դլխոյ ո՛չ կորիցէ »,
Զարն ու բարին մէկ մաղի չափ,
Կչուով Արդարն կը որոջէ:

Յաւիտենից կեանք արդարոց,
Մեղաւորաց վիշտ նոյն չափեաց,
Գործ քո օրհնեն գքեզ ասէ,
Եթէ չարեաց և թէ բարոց:

Ողջախո՛հ լը՛ր, և այն սուրբ սէր,
Թող միշտ լինի քո սրտին աէր,
Գեզ օրինակ Կոյս Հոխիսիմէն,
Զքնաղագեզն, որ անբիծն էր:

Բոլոր սրտիւդ յԱստուած յուսաս,
Մեծ զօրութիւն դու ստանաս,
Տրդատայ պէս ասեղ թաղաւոր,
Պար կը զարնես թաւալգլոր:

Մահուան տապար միշտ անվախճան ,
Շուտ կը հասնի , է՛ անսահման ,
Երբէք խտրել , խնայել չ՛դիտեր ,
Ամէն կարգի է ժանտ իշխան :

Ո՛չ թաղաւոր , ո՛չ ծ եր , տղան ,
Ո՛չ աղքատին , ո՛չ հարուստ տան ,
Զի՛ խնայեր , առ հասարակ ,
Կտրէ , հնձէ , գլորէ զընդան :

Քանի՞ քանի՞ թաղաւորներ ,
Քաջ զօրաւոր հուժկու Տէրեր ,
Որ մահն անդամ չէին յիշեր ,
Եւ ցանկային անմահ լինել :

Աղէքսանդրոս Մակեդոնեան ,
Մեծն Կիւրոս , և Հայ Տիգրան ,
Մահուան տապար յանկարծ տեսին ,
Անցեալ փառաց « աւա՛ղ » ասին :

Քանի՛ քանի՛ երիտասարդք ,
Յուտել խմել ուրախ զուարթ ,
Մահն իրենց տակն էր սողոսկած .
Վերցուց , թաղեց , դեռ նոր ծաղկած

Քանի՛ քանի՛ նոր նոր հարսներ ,
Երբ փեսայի սէր չեն վայելը .
Այն ինչ սենեակ պիտի երթան ,
Յանկարծ ինձեր են դերեզման :

Յօբայ որդիք քեզ օրինակ ,
Սիրով խմբուած էին եօթնեակ ,
Ուրախութեամբ պարել երգել ,
Ինկան մնացին հողերուն տակ :

Արդեօք Հռադուէլը կը յիշես ,
Քանի՛ փեսայ թաղեց , դիտե՛ս ,
Երբ հաղիւ թէ Տուբեան ընտրեց ,
Ապա մնաց նա պարտերես :

Բեթլէհէմի Նահատակներ ,
Պի վայելէին նոր հասակներ ,
Հերովդիտի մահառիթ սուր ,
Հնձեց Կոկոն Վարդ Մաղիկներ :

Ասոնք բոլոր անցան գնացին ,
Եւ տրամութիւն սուգ թողուցին ,
Բարեկամաց և ծնողաց ,
Այս էր բաժին իրենց բաղդին :

Ով որ խնացաւ իրեն մահ ,
Անմահութիւն հասաւ անահ ,
Իսկ որ անհող կերաւ խմաւ ,
Երանութիւն արժան չեղաւ :

Որոնք ասդին արտասուեցին ,
Անդին զուարթ , և ցնծացին ,
Իսկ որք ուրախ պարեն խաղան ,
Անդին լալով վա՛յ վա՛յ կարդան :

Մեծատունէն խրատ ուսիր ,
 Օրինակէս ըսքանչացիր ,
 Անուշահամ օշարակներ ,
 «Կե՛ր ա՛րբ» կըսէր , իրեն անձին :

Ղազարոսն էր աղքատաւոր ,
 Ինկած ասոր դուռն վիրաւոր ,
 Կը փախադէր փշրանքներին ,
 Շուններն ալ վէրք կը լիղէին :

Հարուստն մեռաւ և թաղեցաւ ,
 Անունն յիշել չարժանացաւ ,
 Երբ աչք բացաւ Սանդարամետ ,
 Երկնից խորան Ղազար տեսաւ :
 Թեպէտ աղղաց հօրն աղաչեց ,
 Մատի ծայրով ջուրը խնդրեց ,
 Սակայն խնդիրը մերժուեցաւ ,
 Զի ինքն այնպէս ընել չուզեց :

Ի՞նչպէս կուզես քեզի սիրեն ,
 Ամեն բարիք քեզ ցուցնեն ,
 Այնպէս ալ դուն անոնց ըրէ ,
 Օրէնք և գիրք այսպէս կըսեն :

Խիղճդ մաքուր յստակ պահէ ,
 Անիկայ քեզ բարին կ'աղղէ ,
 Թէ որ կուզես հանդիստ ապրիս ,
 Անոր կամաց կը հետեւիս » :

ԳՐՈՒԱԳ ԵՐՐՈՐԴ

Եղբօրս քովէն ես վար իջայ ,
 Երեք եղբարցս խոնարհեցայ ,
 Մնաք բարեաւ , գիշեր բարի ,
 Երբ մեկնեցայ , ըսի ըսի :

Արդէ՛ն ժամ չորս էր գիշերուան ,
 Զահք և լապտերք ՚ի պատրաստ կան ,
 Աղախիններս ու նաժիշտներս ,
 Դահլիճի դուռ մնան մնան :

Ելայ ՚ի դուրս սրահի դրոնէն ,
 Աղախիններս իմ չորս դիճէն ,
 Խոնարհութեամբ պաղին երկիր ,
 Սենեակս տարան նորէն նորէն :

Նուագարաններ աստի անտի ,
 Բաղջրը ձայնեն զուարճալի ,
 Եւ գիշերուան զողջ անուշիկ ,
 Կուդար կանցնէր մեղմիկ մեղմիկ :

Յուշիկ յուշիկ տոքովս քայլեմ ,
 Իմ տեղս եղբամ ու հոն հնձլմ ,
 Երբ մանկութեան քունն հանդարտիկ ,
 Աչերս առնեն մրախի մրախի :

Բայց փողոցէն անցած ատեն ,
Նայիմ չորս դիս վառք պարծանք են ,
Եւ քանդակներ իմ ոտքիս տակ ,
Կը շողշողին փայլակ փայլակ :

Այս փողոցի երկու կողմեր ,
Կարկաչահոս գնան ջրեր ,
Եւ առուններ փունջ մանուշակ ,
Ծաղկած բերեն դունակ դունակ :

Կարգաւ շարուած են աղբիւրներ ,
Որ կը հոսեն դէպ ՚ի բակեր :

Ասոնց ջրեր մաքուր յտակ ,
Միշտ կը ցօղեն վտակ վտակ :

Բարունակներ զատ զատ տնկած ,
Երկու կողմէն փողոց պատած ,
Խաղողներու ձիւ գեղեցիկ ,
Վերէն ՚ի վայր կախած կախած :

Ասոնց մէջեր թուղ ու նուիկ ,
Դեղձ , Տանձ , Սալոր և Խնձորիկ ,
Չորս ուտողներ կը հիանան ,
Երբ վայելեն քաղցրիկ քաղցրիկ :

Սագ ու Բանդեր առուակներու
Ջրեր խառնեն մէջ լողալու ,
Շատ մարդերուն զարմանք պատէ ,
Երբ կը կանչեն կկղու կկղու :

Վանդակապատ նոր թռչուններ ,
Եւ զուարճախօս քաղցր սոխակներ ,
Միշտ կը երգեն անուշ ձայնիւ ,
Ոճոր ճոճոր , աճեր ճեճեր :

Բնութեան շինած կանաչներով ,
Եւ գոյն զգոյն ծաղիկներով ,
Այս պալատի բակերն ամեն ,
Կը զարդարեն հոտով հոտով :

Մէջ տեղ աւազան մեծկակ ,
Բազմագին Մնդամանդ է տակ ,
Մինչ բոլորտիկ բազմեն մեծեր ,
Չիներ խաղան տեսակ տեսակ :

Մինչ խոտերու տակ պահուրտած ,
Կատուները որսիկ բռնած ,
Երբ քալելու ձայն կը լըսեն ,
Դափեն դիտեն սառած սառած :

Վարդեր բակիս բացուին փայլուն ,
Գեղազուարճ Մայիս ամսուն ,
Ասոնց սիրուն գիշեր բոլոր ,
Սոխակ տոկայ անքուն անքուն :

Ապարանացս պարխապն է քար ,
Յասպիս ականց ու խիտ յարմար ,
Յանկարծ տեսնողք պիտի կարծեն ,
Շահ ճրագներ հաղար հաղար :

Պալատս շինած մէջ չորս լերանց ,
 Ազգի ազգի անտառներաց ,
 Բերանարաց նոր տեղողներ ,
 Կայնած մնան ապշած ապշած :

Թագաւորներ շատ դարմացան ,
 Այս պալատին նախանձեցան ,
 Կրակէ գնտակ շատ տեղացին ,
 Սա դեռ կեցած արձան արձան :

Չորս բաց դռներ կայ պալատիս ,
 Արև ու Մուտ Հարաւ Հիւսիս ,
 Դրանց վերէն քանդակ առիւծ .
 Հա՛ հա՛ կանչէ յաղթես յաղթես :

Սենեկէս ներս մտայ նստայ ,
 Յիմ բազմոցիս , որ պատրաստ կայ ,
 Ա՛հ , մտածմունք ինձի պատեց ,
 Եղբօրս խրատ յիշեց յիշեց :

Տեսի գիմացս պատկեր սիրուն ,
 Յիսուսի սուրբ խաչելութիւն ,
 Անկայ անոր առջին լալով ,
 Ե՛ստ խորհեցայ ուրոյն ուրոյն :

Սիրեմ աշխարհ ու պերճութիւն ,
 Եթէ հոգիս արքայութիւն ,
 Մինչ ես այսպէս տարակուսած ,
 Խիղճս կանչեց արթուն արթուն :

« Բեզի Փրկչին կամաց յանձնէ ,
 Նա գիտէ քեզ ի՞նչ պիտոյ է ,
 Զրպարտութիւն շատ 'տի՛ կրես ,
 Վերջդ լաւ է կանգնէ՛ կանգնէ՛ » :

Խղճիս ձայնէն համողութեցայ ,
 Անմեղ փրկչիս յանձնութեցայ ,
 Ըսի , Տէր , դու ինձի օգնէ ,
 Անմխիթար լացայ լացայ :

Քուն ինձ տրտում տարաւ ասանկ ,
 Երազ տեսի չարագուշակ ,
 Զրպարտիչներս թշնամիներս ,
 Զիս պատեցին արձակ արձակ :

Տեսայ խաչին վերայ գամած ,
 Ինձի կանչեց Յիսուս կամաց ,
 « Մի վախնար դու 'մի վհատիր ,
 Բեզ կոյս եմ ես կեցած կեցած » :

22-5582-62
 1177 / 1111



ԴՐՈՒԱԳ ԶՈՐՐՈՐԴ

Փրկչիս ձայնէն ես արթնցայ ,
Բիւր գոհութիւն տուի նմա ,
Դու ես իմ Յոյս Դու իմ բաժին ,
Ինձ բարեխօս Աստուածածին :

Նաժիշտներէս մէկը կանչեցի ,
« Գինովարէն » բերել տուի ,
Դուչակեցի , սորա բաժակ ,
Պիտի քամէմ ցյադ ցյադ :

Ողբացի իմ հասակ մատաղ ,
Մինչ կարդացի այս Գրքի տաղ ,
« Գինովարէ՛ ես քեզ ընկեր ,
'Տի մերկանամ անձիս զարդեր » :

Երազ տեսի զարհուրեցայ ,
Փափուկ անձէս ալ ի՛նչ բան կայ ,
Որ սիրեցի 'տի անցանեմ ,
Զրպարտութեանց ես համբերեմ :

Ա՛հ , իմ Ալայ մայր ու Շնօֆիկ ,
Ի՛նչ կը խօսին գաղտիկ մաղտիկ ,
Ես կը վախնամ որ ինձ դաւեն ,
Երւոյթ բանն այնպէս բերէ :

Դիտեմ Շնօֆիկ սենակապան ,
Դու դաւադիր ու անպիտան ,
Զրպարտութեան լեղուդ ստես ,
Դիտեմ դու դիս պիտի մասնես :

Ինձմէ ծածուկ չեն գործերդ չար ,
Զորս կը գործես անխտրաբար ,
Թէ աղախին թէ մայրս Ալա ,
Բռնաբարես միշտ լրբաբար :

Զդացիր հասակս հասաւ կատար ,
Կարծես յայտնե՛մ քո չարն արար ,
Բայց ես մօրս պատուոյ անուն ,
Չեմ աղարտեր մնամ պատկառ :

Անշուշտ պիտի դիս զրպարտես ,
Որ չարութիւնդ անլրէպ գործես ,
Ես ալ պիտի խիստ համբերեմ ,
Բո իփորած խոր իյնալդ դիտեմ :

Շնօֆիկ Շնօֆիկ , դու ապերախս ,
Հօրըս բարեաց փոխան ապախտ ,
Զը զարհուրի՛ս և չ'ամուչե՛ս ,
Անունդ ի՛նչ է , անունդ , դիտե՛ս :

Ի՛նչի չկարդաս Գինովարէն ,
Իցէ դառնաս այդ չար ճամբէն ,
Կը հաւատա՞ս , անմեղին Տէր ,
Պիտի փրկէ դիս որսողէն :

Պիլծ ամբարիչտ կը մտանուխ ,
 Փոխանակ անձին անմեղիս ,
 « Գնա՛ արա՛ վաղվաղակի ,
 Զոր ինչ առնելոց ես ինձի » :



ԴՐՈՒԱԳ ՀԻՆԳԵՐՐՈՐԷ

Երեկոյեան ժամն մերձեցաւ ,
 Պահ գիշերուան եկաւ հասաւ ,
 Յաւած սրտով օրս անցուցի ,
 Ա՛խ , ի՛նչ սև օր էր որ տեսի :

Խորհուրդք խռովեն զիս անդադար ,
 Եւ վրդովեն իմ սիրտն իսպառ ,
 Կոծեմ՝ ծըփիմ՝ ի մըրըրկէ ,
 Զի՛նչ Ովկիան ալէկոծեալ :

Կենցաղ , բարմինս , հոգիս անմահ ,
 Զիրար զարնեն ու կանչեմ ա՛հ ,
 Սուտ աշխարհիս փոթորիկներ ,
 Զի՛նչ ծառ շարժեն զիս յերերման :

Թէպէտ իսիղճս է արթուն զուարթուն ,
 Բայց սարսափած է իմ բնութիւն ,
 Աղէկ գիտեմ՝ որ համբերել ,
 Մարդոյս կեանք է , կը համբերեմ :

Եղբարցս քով երթամ ըսի ,
 Որ անհամբեր ինձ կ'ստասեն ,
 Ամենօրեայ սէր վայելեմք ,
 Սէրն մխիթար է վշտերի :

Բարի իրիկուն , ըսի եղբարցս ,
 Աստուծոյ բարին՝ իմ անդրադարձս ,
 Կարգաւ ձեռներ համբուրելով ,
 Խոնարհ պարտիքս կատարելով :
 Ինձի ըսաւ եղբայրս նստէ ,
 Բարձիւղ վրայ , որ պատրաստէ ,
 Կը զարմանամ թէ զի՞ այդպէս ,
 Խռոված թուիս դու ինձ պէս պէս :
 Մի՞թէ խուժանն իմ պալատին ,
 Քեզ խօսքերով վշտացուցին ,
 Կամ նուազարանն ժամ ըստ ժամու ,
 Զի երգեցին ակտորժալու :
 Մի՞թէ ծառայքս և աղախինք ,
 Իրենց պաշտօն թերի՞ թողին ,
 Կամ հարազատ եղբարցս քովէն ,
 Լսեցի՞ր խօսքս՝ քա՛ւ , քա՛ւ , մեղէն :
 Մի՞թէ պակաս կայ զարդերուդ ,
 Ասա հողամբ մեք փոյթ ընդ փոյթ ,
 Արդէն դու սէր մեր մեծագին ,
 Մեք պատրաստ եմք , քո կամք լիցին :
 Ուրախ կ'լինիմք մեք անատեն ,
 Երբ որ ցն՝ ծաս դու զուարթագէմ ,
 Զունի՛մք երբէք զուարճութիւն ,
 Մինչ դու արտում , քուրիկ սիրուն :

Ասա՛ , ասա՛ , մի՛ յապաղեր ,
 Կաղաչեմք , քոյր , քու եղբայրներ ,
 Յաւըդ ի՛նչ է , ի՛նչ այլայլած ,
 Տխուր դէմքով կաս դու ապշած :
 Մինչ գորովէր եղբայրս ինձի ,
 Յանկարծ Շնօֆիկ դահլիճ տեսի ,
 Իրար անցած դէմքը դաժան ,
 Գայ զիս մատնել որպէս Յուդայն :
 Պաղեց երկիր իմ մեծ եղբօր ,
 Կեցցէ՛ Արքայ ըսաւ , հզօր ,
 Այդչափ անյաղ ձեր քոյր սիրէք ,
 Նորա արարք արդեօք դիտէ՞ք :
 Երկվարիդ մինչ ոտ ընդ արոփ ,
 Աշխարհ առնէր արոփ արոփ ,
 Եւ տէրութեան սահմանքն ամէն ,
 Այն նժոյդով կը պաշտպանուէր :
 Ո՛հ արցունքներ ունիմ անչափ ,
 Սիրտս կսկծաց , ըսեմ շտակ ,
 Ի՛նչպէս բերանս բաց բարբառեմ ,
 Թագաւորիս դոյժ ես բերեմ :
 Ալ պարտաւոր եմ ձեզ յայտնել ,
 Ակամայից սուգ մեծ առթել ,
 Այդ անխոհեմ սէր որ ունիք ,
 Քրոջ ձերմէն յուս՛աք բարիք :



Այդչափ երես որո՞նք տուին ,
 Աղջիկ մ' այդչափ ո՞յք սիրեցին ,
 Մի՞թէ նորէ՞ն աշխարհ եկանք ,
 Բնաւ երբէք բանմ' չ'գիտցանք :

Դա՛ , դա՛ դարեր պիտի ածէ ,
 Փոխան սիրոյն որ վայելէ ,
 Ի՛նչպէս ըրաւ այս օր անդու՞թդ ,
 Եթէ վրէժ չ'առնէք ընդ փոյթ :

Շամփուր կըրակին մէջ դըրաւ ,
 Որն որ կայծակի պէս դարձաւ ,
 Զարկաւ նըժոյգի փորին մէջ ,
 Գուրս ցաթիկեց ինչ կար եղ ու ջինջ :

Հաղարաւոր ոսկիներով ,
 Զկայ չ'կայ , անանկ ուժով ,
 Նժոյգ ձի էր , տունէն հասած ,
 Ա՛հ , վա՛հ ականն ինկաւ սատկած :


Եղբայրքս ուշիմ և պատուական ,
 Շնոֆիկին տան պատուսխան ,
 Մենք ողջ լինիմք մեր քոյրն անուշ ,
 Թող ձին սատկէ , ի՞նչ լայ , ի՞նչ գոյժ :

Գլխակորիկ այսպէս գընաց ,
 Մարդու կարգէն իյնալով ցած ,
 Այլ Շնոֆիկին է անամօթ ,
 Անխիղճ տմարդ և չարագութ :

Մայր իմ Ալա , և դու հաւսար ,
 Շնոֆիկին ես չարարար ,
 Սասկըցուցիք ձինը եղբօրս ,
 Վընասըն ձեր բարդէք վրա՞ս :

Դարձան եղբայրքս ինձի , քուրիկ ,
 Հողուցս հատոր սէր միայնիկ ,
 Ա՞յս էր պատճառ գեղեցիկ փոխման ,
 Ա՞յս , որ ցուցիր մեզ , անման :

Գուշակեցիր մի՞թէ մի բան ,
 Սիրոյս մերոյ անզուգական ,
 Ո՛չ ո՛չ երբէք մի՛ կասկածեր ,
 Զինն ու աշխարհ քեզ եմք զոհեր :



ԳՐՈՒԱԳ ՎԵՏԵՐՐՈՐԴ

Այս գիշեր ո՛հ շատ ճանճրացայ ,
 Հոգոց մէջը ընկզմեցայ ,
 Աղախիններս իմ շուրջ պատած .
 Ենտառն անցայ արագ արագ :
 Դիշեր խաւար ո՛հ մութ գիշեր ,
 Քօղ սևաստուեր աչխարհ պատեր ,
 Ասանկ սոսկալի ժամ չըլլար ,
 Ուր ես լուսին , ծագէ՛ Լուսին :
 Բնութիւն ամէն անշարժ կեցած ,
 Կարծես երկիրս է ողջ մեռած .
 Ծառեր չունին զով սօսափիւն ,
 Չեկաւ հողմիկ , ո՛ւր ես հողմիկ :
 Հիւսիսային փշէր քամին ,
 Ճեղքէր մտնար թուխ ամպերին ,
 Պատէր ցրուէր անոնց խումբեր ,
 Ամպ է երկինք , մո՛ւթ է երկինք :
 Հարաւային բարկ արեգակ ,
 Պիտի հայէր լերանց ձմակ ,
 Բուսուցանէր դարին ցորեն ,
 Չ՛ծագեց Արև , ո՛ւր ես Արև :

Թռչունք ամէն սար եւ ձորի ,
 Մէջ կը նիրհեն թեւ ու թեւի ,
 Կարծես հանդիստ կարդայ բնութիւն ,
 Լուէ՛ խօսնակ , ո՛ւր ես Սոխակ :
 Աստեղատուն երկնից կամար ,
 Չի փալփըլար իրեն յարմար ,
 Ինչպէս երեկ՝ նոյնպէս յեռանդ ,
 Չի ցնցըղեր կայծ և լուսեր :
 Եղբարքս քաղցրիկ քնած խորդան ,
 Անկողնոյ մէջ հանգստացան ,
 Երբէք իմ դառն վիճակս չիյտես ,
 Որ չեն կանչեր իրենց քուրիկ :
 Մայրս Ալա ինձ կը լարէ ,
 Որողայթներ և լար հիւսէ ,
 Ծնողական չունի նա գութ ,
 Որ գալարեն աղիքք իւր փոյթ :
 Նա սէր տուաւ Բեչխարին ,
 Մեռույց արդէն գութն ՚ի սրտին ,
 Չունի գորով նա մայրական ,
 Սիրէ Ծնօֆիկ շանձին ծառայն :
 Ո՛հ վայրկեաններ դառն վայրկեան ,
 Ինձի հասան դէմ յանդիման ,
 Ինչու դուք չէք սահեր ՚ի բաց ,
 Դէմքս արձակէ ժպիտ կենաց :

Ահ իմ ծաղիկ տի հասակիս ,
 Պիտի բացուէր փափուկ կուսիս ,
 Է՞ր այս ժամեր սուգ և տխուր ,
 Ինձ պատեցին երկա՛ր երկա՛ր :
 Մինչ օրիորդըս փափկատուն ,
 Կը ճեմէի յանտառ սիրուն ,
 Պայծառ գիշեր զուարթ լուսին ,
 Սնցան զնացին 'ի բաց հեռուն :
 Ո՛հ արտասուացըս կաթիլներ ,
 Պիտի խառնուին յերկնից ցօղեր ,
 Այս հառաչանք հողոց և լաց ,
 Տուան ինձի բաժին ցաւոց :
 Ճակատադիրս սև էր գրուած ,
 Անդարձ վճիռ ինձի հասած ,
 Իսկի մէկէմ՝ յոյս մը չունիմ ,
 Երկինք հասնէ ինձի մինակ :
 Հեռաւոր չէ՛ իմ թշնամին ,
 Այլ ընտանի , է՛ ծնողն իմ ,
 Այլա , Ենօֆիկ սենեկապան ,
 Ինձ կը փորեն խոր գերեզման :
 Թշուառութեանս իմ խնայէ՛ ,
 Գութ ունեցիր վրաս մա՛րէ* ,
 Մի՛ կցորդիր Ենօֆիկին ,
 Որ՛ տի հեղու արիւն անձինս ,
 * Մայր :

Ծաղկեալ կենաց թել հասակիս ,
 Չարալեզու սրբով կտրէ ,
 Շիթ արենէս թափի երկիր ,
 Երկինք հանէ վրէժս անկէ :
 Լո՛ւր Մարդարէն թէ ին՛չ ասէ ,
 Փորած պեղած դուր ինք կիյնէ ,
 Ուրիշներու դաւաթ փրթած ,
 Անշուշտ դայ քօ դրկալին հաց :
 Կարդալ գիտէ բայց չի պահեր ,
 Կամաւ լինի կուրաց ընկեր ,
 Ձին՛չ ջորի բարձած դերքերով ,
 Ուտէ գարի չորցած յարգով :
 Յառաջադէմ չարեաց կարի ,
 Սէր բարութեան բնաւ չունի ,
 « Մարմնոյ ինձամ 'ի ցանկութիւն » ,
 Փափաղեւով փարէ տանի :
 Կիրք ցանկութեան ո՛վ ինձամեց ,
 Անդարձարար երկինք վճռեց ,
 Անքուն որդեր տի չ՛մեռնին ,
 Արիւն ծծեն անյագ անյագ :
 Ենօֆիկ արեանս դու մի՛ ցանկար ,
 Չանի թափել մի՛ արտորար ,
 Դիտցած լինիս կայենի պէս ,
 Պատիժ պիտի կրես պէս պէս :

Բովս լինէիր քեզ պատմէի .
 Շուշանի կեանք նկարէի ,
 Բայց ես ինքնին կ'ընթեռնում զայն ,
 Մըխիթարուիմ քեզմով՝ Շուշան :

« Շուշան մատաղ ու գեղեցիկ ,
 Իսրայէլի ծերք չար և լիրքք ,
 Կուղեն Շուշան բռնաբարել ,
 Ժամ կը փնտուեն պարապ դռներ : »

Շուշանին ժամ լուղանալու ,
 Սովորութիւն էր երթալու ,
 Նաժըշտի հետ 'ի միասին ,
 Մեծ աւազանըն պարտիղին :

Բայց նախապէս այն չար ծերեր ,
 Պարտիղի մէջ ծածուկ տեղեր ,
 Պահուըտելով կը գիտէին ,
 Կուղեն բռնել անմեղ Տիկին .

Մինչ Շուշան իւր լաթեր հանէր ,
 Նաժիչան զրկեց Աճառ բերել ,
 Ասաց , դռներ,ամուր գոցէ ,
 Շուտով դարձիր ,զգոյշ նայէ :

Բայց խեղճն անգէտ էր ծերերուն .
 Շնացող չան պէս պահուողներուն ,
 Մինչ ազախինն ել պարտիղէն ,
 Պատեցին զայն զերթ գայլ մէկէն :

Աղաղակեց անճար Շուշանն ,
 Ադոնջայի Տէր , քեզ յուսամ ,
 Դու կարո՞ղ ես զիս ազատել ,
 Եկեալ հասած չարեաց փրկել :

Եւ զօրանայր ու մաքառէր ,
 Ասէր , 'ի բա՛ց , իշխա՛ն ծէրեր .
 Զի մեղք մեծ է մահէն ալ չար ,
 Կուղեմ մեռնիլ , ձեր ձեռք չ'իյնալ :

Այս պահուս էր նաժիչան եկաւ ,
 Դուռը բացաւ ու ներս մտաւ ,
 Եւ չար ծերեր փոքր ինչ զատուած ,
 Կարտորային կեղծուկ մեղծուկ :

Դարձան ըսին առ ազախին ,
 Իրենք զիրենք արդար ցուցին ,
 Երկտասարդմ՝ ձեր տիկնոջ հետ ,
 Այո՛ այո՛ մեղք գործեցին :

Մենք երբ յանկարծ վրան հասանք ,
 Ինք մաղապուրծ փախած դասանք ,
 Ուստի փնտրեմք հետաքրքիր ,
 Ո՛ւր կորաւ նա ո՞ւր է , դախիր :

Աղջիկ շուարած սառ կտրեցաւ ,
 Տիկնոջ վրայ շա՛տ զարմացաւ ,
 Գիտէր համեստ ու անարատ ,
 Կեանք կը վարէր միշտ շարունակ :

Բայց կ'վկայեն դատաւորներ ,
 Արդար կարծած Հրէից ծերեր ,
 Վասն այն չ'կարաց պատասխան տալ ,
 Ուստի մնաց ապշած պաղած ,
 Յաջորդ օր զրպարտող ծերեր ,
 Յովակիմայ տունն են ժողուէր ,
 Ձի դատաստան միշտ հոն լինէր ,
 Շուշան բերին , քող երեսն էր :
 Ատեան բացուաւ ժամը մէկին ,
 Պիտի դատուի անմեղ Տիկին ,
 Բաղաքն ամէն լալով կոծով ,
 Կանչեն Շուշան , խիստ ողբալով :
 Բայց երբ ոտինն դատաւոր լինի ,
 Մեր օգնականն Աստուած պիտի ,
 Կըսէ առած հասարակաց ,
 Շուշան յուս'ա , զի կայ Աստուած :
 « Ասեն քօղ երեսէդ վար առ ,
 Մեղք դործելուն դու չամբչցա՞ր ,
 Հիմայ ատանկ կեղծ ու պատիր ,
 Պիտի կրնա՞ս անմեղ թուիլ :
 Ծերերն այնչափ ծարաւ էին ,
 Գեղեցկութեանն պը՞ռ* նայ'ին ,
 Մոլի մտօք իրենց չար կիրք ,
 Շիջուցանեն դեղովն այնմիկ :
 * Ապշած :

Շատ ատուպատ հարցումն ըրին ,
 Վաղվաղակի մահ՝ վճռեցին ,
 Շուշան տարան քարկոծելու ,
 Սմբոխն արտօսը քամեց աղու ,
 Որ ժողովուրդ իրեն ազգէն ,
 Կրնարէ այսպէս դատաւորներ :
 Մահ կը բերէ իր և ազգին ,
 Պիտի կարդա վա՛յ վա՛յ անձին :
 Արդ Յովակիմն կը հառաչէ ,
 Իմ ամուսինս , ա՛հ վա՛հ , ո՛ւր է ,
 Բոլոր քաղաք մէկէն գնացին ,
 Ներկայ մահուան անպարտ անձին ,
 Յայնժամ մանկիկ սուրբ Դանիէլ ,
 Հոգւով լցուած ասէ , դարձիք ,
 Արդար արեանդ անպարտ եմ ես ,
 Ես դատ տեսնամ . դարձիք ՚իտես ,
 Ամբոխն զշուշան ետ դարձուցին ,
 Նոր դատաւորն բազմեցուցին ,
 Ծերերն իրենց բերնովն ինկան ,
 Շուշանն անպարտ , արձակուեցան :
 Ա՛հ Ո՛վ երկինք , Մարդարիտիս ,
 Հասիր ցաւով այրած սրտիս ,
 Լըսէ՛ անմեղ աղաչանացս ,
 Ազի և դառն իմ արտասուացս :

Եւ անտառէն եկայ սենեակս ,
Տրտում տխուր է տեսարանս ,
Ա՛հ , ե՛րբ տիրէ փայլուն պայծառ ,
Արշալոյսի շող ցօղափայլ :

Գիշերս անքուն դադար չունէր ,
Իբրև ծովու կը ծածանէր ,
Ես որպէս Նաւ անոր ալեանց ,
Մառնուեցայ աւ՛աղ աւ՛աղ :

Լուսացաւ լոյսն առաւօտին ,
Երգեց Սարեկն արշալուսին ,
Այլ իմ սրտի մութն ու աղօտ ,
Չկարաց մերժել ջինջ Արեգակն :

Մինչ իրիկուան մթան պահուն ,
Անմխիթար սիրտս սահուն ,
Ելայ եղբարցս քովը գնացի ,
Ասեն « եկար հաղար բարս » :

Իմ մեծ եղբայրս դարձեալ գրկեց ,
Իրեն աջ կողմն ակոռու դրեց ,
« Անուշ քուրիկ և նաղելի ,
Դու մեր գլխի պսակ ոսկի » :

Մինչ եղբարցս հետ տեսնուեցայ ,
Դրսէն ուրախ պայծառ զուարթ ,
Իսկ ՚ի ներքուստ տրտում տխուր ,
Սրտիս թեւեր թըրթրան արդ :

Չը կարացի ես զիս զսպել ,
Յաւերս ամէն պահել թաղուն ,
Արգէն լցուած սրտիկս փլաւ ,
Հեկեկացի դառն այս պահուն :

Մինչ աչերացս վտակ կայլակ ,
Կը թըջէին այսերս սիրուն ,
Ա՛հ կենցաղոյս պայծառ օրեր ,
Ե՛րբ 'տի բերէ զուարթ գարուն :

Մինչ թաշկինակ դեմքիս դրած ,
Աչերս բացուած աղբիւր ական ,
Գըլ որէի մարգարտի պէս ,
Չերթ կարկտիկ օդոյն Աշնան :

Մինչ գայարէր աղիք ներսէս ,
Եւ հեծկտար չունչս ՚ի բերնիս ,
Ա՛հ կանչելով հառաչէի ,
Թանայի գող հարաղատիս :

Կը դուշակեմ արեանս թափուիլ .
 Նոր զօրացած երակներէս ,
 Անշուշտ ես նոր բացուած ծաղիկ ,
 Պիտի հնձուիմ բուրաստանէս :

Քարող կարգան թող աշխարհի .
 Գան ժողովին ամեն կուսանք ,
 Բոլորին շուրջ դերեղմանիս ,
 Եւ զիս ողբան լալկան կանայք :

Ո՛վ էր տեսէր չքնաղ կուսան ,
 Այսպէս արեամբ մեռնիլ անպարտ ,
 Եւ մերկանայր իր վառքերէն ,
 Մընայր անշուք և առանց զարդ :

Ո՛վ էր լսեր դեղեցկատիպ ,
 Աղջկանմ արիւն երկիր հոսած ,
 Այն ալ օտար թշնամեաց չէ ,
 Այլ ՚ի մօրէն իւր թելադրուած :

Ո՛վ այն լսեց չի զարմացաւ .
 Մեռնէր աղջիկ թաղաւորին ,
 Շընոֆիկէն զրպարտուելով ,
 Եւ մատնութեան մայրն հեղինակ :

Ա՛հ իմ ցաւերս ո՞ր մէկ երգեմ ,
 Նոր եմ հասած նոր օրերուս ,
 Յանակնկալս այս սե՛ւ օրեր ,
 Յաջորդեցին ինձ այս տարոյս :

Ա՛լ վերջին շունչս եկաւ հասաւ ,
 Պիտի կարգամ իմ հոգեւարք .
 Մահարձանիս թող դրոշմուի ,
 Իմ անցուցած վշտայի կեանքս :

Բայց ի՛նչ կ'ըսեմ ինչ յուսահատ ,
 Միթէ երկինք չ'կոյ՛ Աստուած ,
 Նա կարող է՛ ես հաւատա՛մ ,
 Փրկել զանմեղս ՚ի թշնամեաց :

Ուրեմն Դու . Դու ո՛վ երկինք ,
 Քեզ յանձներ եմ , զիս Քո կամաց ,
 Քո սուրբ կամքը օրհնեալ լինի ,
 Մի թողուր զիս ձեռքէդ ՚ի բաց :

Դիտե՛մ , դիտե՛մ , Գե՛ղ յուսացող ,
 Պիտի չամչնայ մէջ իր կենաց ,
 «Միօնի սուրբ լերան նըման ,
 Հասսատ մնայ միշտ յաւիտեանց » :

Այս պահուս մէջ ըսթափուեցայ ,
 Յանկարծ սարսուռ մը ինձ առաւ ,
 Երբ նենդ Շընոֆիկ դահլիճի մէջ ,
 Եկաւ դարձեալ երևեցաւ ,

Դժգոյն երես խոթառադէմ ,
 Մինչ զիս տեսաւ նախանձ շարժեց ,
 Իր մահազոյժ բերան բացած ,
 Զրպարտութեան թելեր հիւսեց :

- « Ո՞վ Տէր արքայ , Արքայդ հզօր ,
Տիեզերաց դու անհարկու ,
Քեզ խոնարհեալ երկրպագեմ ,
Տուր հրաման ինձ խօսելու .
- « Հաւատարիմ ձեր տերութեան ,
Պայծառութեան դահուդ ցանկամ ,
Վասն այն չուզեմ վնաս երբէք ,
Արքունական վեհ գանձատան :
- « Եւ չեմ ուզեր բնաւ երբէք ,
Նշանախեց մի զուր սին տեղ ,
Ա՛նձնի , կոտորի , կորի , այնպէս ,
Ոչնչանայ ունայն անտեղ :
- « Ասոր համար ձեզ նախապէս ,
Կուգամ աղդել ես անձանձրոյթ ,
Որ չըլինի վերջին անգամ ,
Ինձի ասէք ո՞վ վատ անփոյթ :
- « Այսօր երկրորդն ձեզի պատմեմ ,
Մեկ զարմացման է արժանի ,
Եթէ այսպէս որ միշտ երթայ ,
Երկինք ըզ ձեզ թող աղատէ :
- « Աբաղաւաղ ձեր որսորդ շուն ,
Չոր մեծ գնով առերէկք ,
Չեր սիրատուն առարկան էր ,
Որ միշտ փութով խնամէիք ,

- « Ձի զին՞ որսոց անկնապիչ լեալ ,
Անշուշտ պիտի դանի բռնէր ,
Անդուդական Ձեր այս ջնիկ ,
Խաղալ պարե՛լ ալ , շատ գիտէր :
- « Ուստի ես շատ անգամ տեսայ ,
Դի միասին բազմած սեղան ,
Ձեր ձեռքովը կերակրէիք ,
Չէիք թողուր պակաս մի բան :
- « Ո՛չ մի վայրկեան առանց նորա ,
Չանցնէին ձեր խրախ ժամեր ,
Արդէն սիրուն էր և կայտառ ,
Յաթկուտելով խնաու՛մ առթէր .
- « Ո՛հ , ին՞չ օր էր որ ես տեսի ,
Յաւիմ որ դամ ձեզ բօթարեր ,
Չըսեմ , այլ ի՞նչ պիտի ընեմ ,
Մինչդեռ քուք կայք արդ անհամբեր :
- « Գուչակութիւնս կատարուեցան ,
Ճիշտ , որ ասի ես անցեալ օր ,
Եթէ չպատժէք քոյրդ ստահակ ,
Չարիս գործէ դա օր քան զօր :
- « Մարդարիտան ձեր քոյր անդուլթ ,
Չարկաւ մեռցուց ա՛ւաղ խապառ ,
Մինչ ողորմ ձայն նա արձակեց ,
Սարսուռ տիրեց զիս խղճահար » :

« Հող չէ՛ հող չէ՛ , Ենօֆիկ , հող չէ՛ ,
Եղբայրքս ու մեր քոյրն ողջ անոյջ
Ըլլամք յաւէտ միշտ յարածամ՝
Թող մեր շնիկ քընէ անյուշ » :

Գարձեալ գնաց ամօթալից ,
Երկրորդ Յուդան դիս գրպարտող .
Պիտի չ՛դադրի չարին ընկեր ,
Գիտեմ նեաէ դա իմ քիթօ օղ :

Ասաց եղբայրս , քոյր պատուական ,
Ա՛յս էր առիթ քոյդ տրտմութեան ,
Բ՛ա . ք՛աւ լիցի բնաւ , մի՛ յուսար ,
Մեր սիրտ քեզմէ է անբաժան :

Ո՛չ թէ միայն ձինն ու շընիկ ,
Այլ և աշխարհ քեզի փոխան ,
Պիտի ձօնեմք աղնիւ դեղոյդ .
Գուրիկըդ մեր , չի՛ք քեզ նըման :

ԳՐՈՒԱԳ ՈՒԹԵՐՐԱՐԴ

Մինչ գիշերուան իշխանուհին ,
Իւր գաւաղանն սևագոյն .
Պարզեց բոլոր բնութեան վրայ ,
Խաւար պատեց տրտմադոյն :

Մինչ բնութիւնք թուլցած ինկած ,
Զիրենք քնոյ յանձնեցին ,
Մեռելութեան այս նշանակ ,
Առ հասարակ խորդացին :

Մինչ այս պահուս ժամը չորս էր ,
Իրօք զարկեց մեծ դանդակ .
Կենացս անգին ժամերն այսպէս ,
Կուգան կանցնին շարունակ :

Անցած վայլած ժամերս ո՛ւր են ,
Ա՛հ ցանկալիք իմ աչաց .
Սիրտըս ուրախ դէմքս զուարթ ,
Զերթ շքեղ հարս զարդարուած :

Նոքա դնացին յաւիտենից ,
Անտակ ՚ի ձոր գլորուան .
Եւ անոնց տեղ ո՛հ յաջորդեց ,
Ժամեր տխուր և մթան :

Որովհետեւ աշխարհս չունի ,
 Վիճակ երբէք հաստատուն ,
 Մինչև որ մարդ չերթայ աստի ,
 Երկնից կայան զուարթուն :
 Երջանկութիւն այս աշխարհէս ,
 Բնաւ մի՛ յուսար , չունի նա ,
 Միայն յերկինս դռնաս զանի ,
 Զի արդէն հոն կայանայ ,
 Հոս մնալու պահ չի մնաց ,
 Երթամ քաշուիմ ՚ի սենեակս ,
 Որովհետեւ քունը տարաւ ,
 Երախտաւոր իմ եղբարցս :
 Երթամ երթամ , այո երթամ ,
 Դիմաց վրկչիս պատկերին ,
 Լամ և կոծեմ վիճակս անբաղդ ,
 Յանձնուիմ նորա սուրբ կամքին :
 Ո՛վ , Դու որ իմ սենեկիս մէջ ,
 Կեցած մնաս Դու իմ ՅՈՅՍ ,
 Մանկութենէս հողիս մարմինս ,
 Քեզ յանձնեցի , ո՛վ ՅԻՍՈՒՍ :
 Քան իցս անդամ զըպարտութեանց ,
 Ազատ պահես իմ անձ Դու ,
 Մինչ Շնօփիկ քո սուրբ երկիւղ ,
 Զղգաց , եղև մատնտու :

Դեռ մինչև ցարդ չի դադարեր ,
 Խղճէն օցտեալ փորէ դուբ ,
 Բայց կը յուսամ որ նա անել ,
 Պիտի իյնայ մերձ ընդ հուպ :
 Ո՛չ , չեմ ուզեր փոխան նորա ,
 Հատուցանել չարին չար ,
 Գիտեմ կարգամ պատմութիւններ ,
 Խոր փորող կիյնայ խաւարն :
 Սակայն զարմանք ինձի եկաւ ,
 Մինչ մայրս Շնօփիկ միարան ,
 Քսիսալով ասդին անդին ,
 Կը խորհէին իրք մի բան :
 Անչուչտ այս էր , դիտեմ , այո՛ ,
 Որսորդ շնիկ սատակել ,
 Կատարեցին այս չար խորհուրդ ,
 Եւ նա եկաւ զիս մատնել :
 Ո՛վ արարչէն չի վախենար ,
 Ամօթ չ՛ղգար մարդկանցմէ ,
 Զինչ չար ասես անխտրաբար ,
 Եւ լրբօրէն նա գործէ :
 Ատոր համար մեր պառաւունք ,
 Աղօթեն միշտ հաստատուն ,
 « Տէր չ՛հանես ահըն մտքէն ,
 Ամօթ դէմքէն զօրն ՚ի բուն » :

Այն որ իրեն աչքին առաջ ,
 Մահ չի բերէր միշտ ներկայ ,
 Մեղաց քովէն ալ չի վախնար ,
 Միշտ կընէ իր առարկայ :

Ով չի խորհիր ուրիշներուն ,
 Ի՞նչ որ կընէ իր կընէ ,
 Թող հետեւեալ պատմութենէս ,
 Իրեն օգուտ դաս սերտէ :

Աղքատին մէկ շատ չքաւոր ,
 Գոներ մուրար անդադար ,
 Ա՛հ , երանի ասանկներուն ,
 Ասոնք հոգւով են արդար :

Այս էր խրրատ և օրհնութիւն ,
 Այս կը խօսէր անդադար ,
 « Ի՞նչ որ կընես դու քե՛զ կընես ,
 Պատառւմ հաց տուր խեղճիս . »

Այսպէս ահա պըտըտելով ,
 Մի հարուստ դուռ գտաւ բայ ,
 Այս տանուտէրն էր մեծ իշխան ,
 Արևելեան դաւառաց :

Մորա որդիք երկու խաբտեալ ,
 Զքնազաղեղ պատանի ,
 Պատերազմի էին գնացած ,
 Հիւսիսային բանա՛լի :

Ինքը տուն չէր մինակ տիկին ,
 Հաց կը եփէր Թորվան մէջ .
 Աղքատին ալ այս կը պիտէր ,
 Գնաց նստաւ նորա խեչ* :

Սովորական իրեն տաղեր ,
 Սկսաւ ասել նա այսպէս ,
 « Ինչ որ կընես դու քե՛զ կընես ,
 Պատառւմ հաց տուր խեղճիս » :

Տիկին ուրախ և զուարթուն ,
 Հաց մը հանաւ Թոնիրէն ,
 Տաք տաք տուաւ խեղճ աղքատին ,
 Ասաց , առ հետզ պանիրէն .

Աղքատն օրհնեց և գոհացաւ ,
 Ելաւ գնաց ման** դալու ,
 Ասկէց աղէկ տե՛ղ 'տի դոնայ ,
 Շարունակեց միշտ դալու ,
 Ինչուան տիկինն այն ձանձրացաւ ,
 Ասաց ի՞նչ ճար մտածեմ ,
 Որ աներես այս աղքատը ,
 Տանըս սեամէն հալածեմ :

Գիտեմ ինչպէս պիտի անեմ ,
 Թոյնը դնեմ հացին մէջ ,
 Երբ աղքատ դայ տամ իրեն ես ,
 Ալն ի՞նչ գիտէ ի՞նչ կայ մէջ ,
 * Քով ** Պըտըտիլ :

Այս չար խորհուրդը յղացաւ .
 Տիկինն անխիղճ շարաշար,
 Չառեց խորրատ այն աղքատին ,
 Կարդացած , մեծ ընտիր ճառ :
 Օր մի իշխանն նամակ առաւ ,
 Իր որդւոցմէ սիրունակ ,
 « Թէ այս ինչ օր մենք անպատճառ ,
 Այս տեղէն հող պիտի դամք » :
 Այն օր իշխանն տիկնոջ սասց ,
 Գատա եփէ թարմ փափկիկ ,
 Պիտի դան մեր զաւակները ,
 Թող վայելեն միշտ քաղցրիկ :
 Տիկնոջ մըտքին ժամն է յարմար ,
 Թոյնը գաղայի մէջ դբաւ ,
 Աղքատ դարձեալ յանկարծակի ,
 Եկաւ թոնրի քով նստաւ :
 Շարունակեց սովորական ,
 Զարմանալի իր խօսքեր ,
 « Ինչ որ կընես դու քեզ կընես ,
 Պատառմ հաց տուր խեղճիս :
 Տիկինն ուրախ արտորանօք ,
 Հանեց թիւնալից գաղան ,
 Որովհետեւ մի նշանաւ ,
 Զատ եփած էր ի Թորվան :

Խեղճ աղքատին տուաւ սյսպէս .
 Իրեն ասաց նա մտքին ,
 « (Վերէմ) թալած առ դնա՛ կեր՛ ,
 Որ չերեւնաս իմ աչքին » :
 Իսկ աղքատին այն խօսքն իրաւ ,
 'Տի կատարուի անպատճառ ,
 Որովհետեւ Երկինք սյսպէս ,
 Վիճիւ կուտայ , է՛ արդար :
 Մինչդեռ տար տար Գաղան կառնէ ,
 Աղքատն անմեղ միամիտ ,
 Չուտեր նա իր ծոց կը դնէ ,
 Որ տայ որդւոց իւր ձեթկիկ :
 Մինչդեռ աղքատն կ'աճապարէ ,
 Հասնել սիրուն զաւակաց ,
 Որ անօթի նստեր լալով ,
 Կանչէին «պատառւմ հաց » :
 Յանկարծ երկու կտրիճ արղայ ,
 Ելան դիմաց աղքատին ,
 Ուրախ զուարթ շատ հեղնելով ,
 « Ի՞նչ ունիս դու քո ծոցին :
 « Սովրած եմք մեր հեռու ճամբէն ,
 Գիշերս անցանք վաստակեալ ,
 Կարողութիւննիս չը զօրեր ,
 Մինչև մեր տունը սովալ » :

Ասաց աղքատն , « Ես բան չունիմ ,

Մինակ փոքրիկ մի Գաղա ,

Պիտի տանիմ նախաճայիկ ,

Իմ զաւակացըս սոված » :

« Տո՛ւր , ասին , տ՛ուր , որ ուտեմք մենք ,

Երկու եղբարքս հաւասար ,

Գու կարող ես ուրիշ տեղէ ,

Գտնալ որդւոցըդ մի ճար » :

Բռնի առին խեղճ աղքատէն ,

Իրենց ուղածն ինչ որ էր .

Կերան երկուքն հաւասար ,

Գնացին իրենց տուն մեկէն :

Պահ մի անցաւ իրենց վրայ .

Սկսաւ փորերն դալարել ,

Ա՛հ , վախ ասին պիտի մեռնիմք ,

Մութ պաշարեց մեր աչքեր :

Տիկինն ու Տէրն ասին , ո՛րդեակք ,

Ի՛նչ եղաւ ձեզ . պատմեցէ՛ք ,

Այս ինչ ձիւն էր որ մեր դիւխն ,

Պիտի բերէք , ասացէ՛ք :

« Ա՛հ մենք չիյտենք ի՛նչ տի ասեմք ,

Մինակ սա էր մեր պատճառ .

Ծեր աղքատէն մեք բռնութեամբ ,

Առինք կերանք Գաղան սառն » :

Պահ մի մնաց պատանիներ ,

Ողորմ ձայնիւ հեծեցին ,

Եւ մահառիթ թոյնի ուժէն ,

Ծնչեր յերկինս փչեցին :

Տիկին նորէն զարկաւ դիւխն .

Կարգաց իր սև օրերուն ,

« Ա՛հ , աղքատի ասաց խօսքեր ,

Է՛ր չպահեցի հաստատուն » :

Այսպէս ահա ո՛վ Ծնօֆիկ .

Գեղ ալ պիտի պատահի .

Թէ չը դառնաս քո չար կամքէն ,

Զիս զրպարտես սոսկալի :

ԴՐՈՒԱԳ ԻՆԵՐՐՈԳ

Ա՛հ, անուշ քուն ո՞ւր ես փախչեր,
 Վաղուց 'ի վեր չեմ վայելեր,
 Հողնած բնութեան մինակ սնունդ,
 Իմ աչերուս էր չես թառեր:

Գիտեմ դու ալ ուրախասիրտ,
 Աչեր փնտռես զուարթ և խինդ,
 Զերմ արտասուաց մէջ լողացող,
 Քեզմէ չունի բաժին նա պինտ:

Ա՛հ, քանի՞ օր քանի՞ դիչեր,
 Խոր քնոյ չեմ արժանացեր,
 Արթուն հողով մոսածելով,
 Խելքիս փնաս եմ հասուցեր:

Ո՛հ, քնատանջ ես մինաւոր,
 Հողամ սրգամ ցաւերս ո՞ր,
 Ալ ի՞նչ տեսակ ճիւղներ կան,
 Անքուն աչացս երեւան նոր:

Կարծեմ փոքր ինչ հաւերու պէս,
 Աչքս գոցեցի ես երազէս,
 Քեր ցաթկեցայ, ո՛հ, ճիւղներ,
 Դանակ բռնած դահիճի պէս:

Դիչեր սաստիկ խաւար մըթան,
 Ինձի անհուն դաշտիմ՝ տարան,
 Այս սոսկալի վայրկենիս մէջ,
 Ո՛չ ոք չըկար ինձ օգնական:

Խոժուադէմ այն ճիւղներ,
 Որոնց ահէն եմ սարոսփեր,
 Ճիգ չեմ կրնար հանել երբէք,
 Պաղ ու սարսուռ ինձի տիրեր:

Անխնայ զիս կոտորեցին,
 Ուրոյն ուրոյն յօշատեցին,
 Սըրունքներուս ու թեւերուս,
 Արեամբ երկիր ողողեցին:

Զկյտեմ ցնորք էր թէ ըստոյդ,
 Եւ կատարուէր պիտի անփոյթ,
 Մինչ ես այսպէս տարակուսած,
 Դառն վիճակէս առի զայրոյթ:

Ա՛հ, ի՞նչ էի ես ի՞նչ եղայ,
 Եւ զի՞նչ լինիմ պիտի ապա,
 Ճակատագիրս ու իմ սև բաղդ,
 Զայս կարգացին բանքս հետագայ:

«Այս ցնորք չէ իրօք, արդար,
 Ճի կատարուի կուսիկ մատաղ,
 Եւ թէ իսպառ դու համբերես,
 Ուրախութեանդ հասնի կատար»:

Խաչին առաջ ինկայ այս պահ ,
 Գու Տէր պահէ ինձի անվահ ,
 Որ Խաչդ գրկեմ գամ ետեւէդ ,
 Գոհ համբերող լինիմ անահ :
 Իիշերս ժամեր ծանրը անցան ,
 Արշալոյսի թռչունքն եկան .
 Ա՛հ ձեր սիրուն երգերն ո՞ւր են ,
 Մի թէ ձե՞րն ալ իսպառ կորեան :
 Ինչպէս որ իմ ամէն փառաց ,
 Յաջորդեցին ժամ տրտմաղգեաց ,
 Ո՛չ ո՛չ դուք ինձ մի նմանէք ,
 Գուք երգեցէք երգ Գուսանաց ,
 Մի՞թէ և դ՞ուք էք մատնուած ,
 Չար Շնոֆիկէն արհամարած ;
 Ո՛չ ո՛չ . ազատ էք դուք ազատ ,
 Երգեցէք երգ զուարճութեանց :
 Ինչ՞ու տրտում ձեր երեսներ ,
 Չեն թրթրար մանրիկ թեւեր .
 Առաւօտեան հովիկ պահուս ,
 Չը կանչեցիք ձեր սուրբ տաղեր :
 Մի՞թէ և դ՞ուք ինձի նման ,
 Կայք մատնուած անպարտ մահուան ,
 Ո՛չ, զրպարտութիւն դուք չդիտէք ,
 Չեր տարբեր կեանքն է աննման :

Թէ որ ուրախութեան երգեր ,
 Ինձ զլանան ձեր Բնարներ ,
 Ես ձեզ ընկեր հաւատարիմ ,
 Եկէք ասենք սրգոյ տաղեր :
 Մարէ¹ , մարէ . ինչի՞ ըսկնայ² ,
 Ձիկ³ արիւր շուար⁴ շափարղա⁵ ,
 Թէ քեոյ⁶ աղջիկն եմ սեւաւոր ,
 Ինչի՞ կանես ձիկ վէրաւոր :
 Մաշտեմ⁷ ո՞ր սարերաց վէրէն ,
 Ձիկ կը տանեն որ դեաշտերէն ,
 Էն դեաշտերաց մէջ ծաղիկ կ'այ ,
 Որ ես քեաղեմ անեմ տաստայ⁸ :
 Չեմ ավատայ⁹ ծաղիկ էլնի ,
 Չըմէն¹⁰ տեղն էլ սև քեարերի ,
 Կեո¹¹ իմ կարմիր քեաղցր էրընով¹² ,
 Պիտի նշղեմ¹³ օղով¹⁴ ճօղով :
 Ա՛խ , քեոյ սրտիկ ինչըխ սրտի ,
 Քեոյ ճիգարն ի՛նչ կանտար¹⁵ հօլի ,
 Թէ քեոյ աղջիկն եմ ես Մարգրիտ ,
 Մանգեար¹⁶ քեոյ սիրտ անպինտ¹⁷ քեարի :

1 Մայր : 2 Այսպէս : 3 Ինձի : 4 Ապշած :
 5 Տարակուսած : 6 Քո : 7 Սրգեք : 8 Փռեջ :
 9 Հաւատար : 10 Ամէն : 11 Ահա : 12 Սրբանով
 13 Չարդարեմ : 14 Ճաճանչներով : 15 Ինչբան :
 16 Մի՞թէ : 17 Կարծր :

Մարէ , մարէ ձիկ չը թողնես ,
 ճարտաներաց ձեռ ձիկ չ'իսկես¹⁸ ,
 Աղջիկ այալ¹⁹ եմ հասերեմ ,
 Սրտիս վերէն հասրաթ²⁰ թողնես :

Թէ քեոյ ճիգարն եմ քեոյ էրուն ,
 Ձիկ մի՛ թալեյ²¹ պիթուն պիթուն ,
 Քեոյ սրտամե²² մալուլ աղջիկ ,
 Քեոյ աղաջանք²³ կինի ահուն :

Մաշտեմ մարէ ալանջ կանե՞ս ,
 Տիւ իմ ասածներ կը լսե՞ս ,
 Քեաչկէ²⁴ Շնօֆկիցն ատրցվորես ,
 Քեոյ արարիչ Աստուած սիրես :

Ա՛հ , ի՛նչ կ'ասեմ ունայն պարապ ,
 Ժամերս անցան արագ արագ ,
 Ենեմ երթամ եղբայրքս տեսնեմ ,
 Հրաժարականս տամ ընդարձակ :

Անցայ եղբարցըս սենեկէն ,
 Ամէնքն պատրաստ էին արդէն ,
 Շուտ ցաթկեցան ոտքի վրայ ,
 Բարեւեցին ինձի մէկէն :

18 Չը ձգես : 19 Մատաղ : 20 Փախազ :
 21 Նեատէր : 22 Տրտում : 44 Աղաջեւ : 24 Ի.
 ցե՞ թէ :

Այն ինչ պաշտօն իմ սեփհական ,
 կատարեցի անմիջական ,
 Թագւոր եղբայրն իմ Զօրիոս ,
 Ասաց «նստէ՛ , քուրիկ , իմ քուլս » :

Ո՛ւր էիր ցարդ ի՛նչ կընէիր ,
 Է՞ր ուշացար կանուխ չ'եկիր ,
 Մենք անհամբեր կըսպասէինք ,
 Ձեր գալստեանըն շնորհածիր :

Կը զարմանաք չ'ատ քեզ վրայ ,
 Ինչու երեսնիդ տխուր կայ .
 Այս քանի օր կը նշմարուի ,
 Ի՛նչ ցաւ ունիս քեզ առարկայ :

Դու մեր պարծանք դու մեր սուրբ սէր ,
 Կը հարցանեմք քեզ ինչ հոգեր ,
 Ուրախ լըր դու զուարթ , ցնծա ,
 Որ վայելեմք ժամ և օրեր :

Մինչ այս բաներ կը խօսէինք ,
 Ձիրար սիրով կը գրկէինք ,
 Ա՛հ , իմ նախկին չար թշնամին ,
 Ինձի բերաւ օր խաւարին :

Այ՛ո , Շնօֆիկ մեծ բարկութեամբ ,
 Յասմամբ մեծաւ սրտմտութեամբ ,
 Իւր աստիճանն ալ մոռնալով ,
 Մէկէն պօռաց չ'ատ զարմացմամբ :

« Սիրեցէ՛ք դուք , դ՛ա սիրեցէ՛ք ,
Ի՛նչու պիտի սիրաք կոտրէք ,
Օրմ՛ ալ ձեզի՛ այնպէս կընէ ,
Ի՛նչպէս ըրաւ մանկան , դիտէ՛ք » ,

Ա՛հ , այս Մանուկ Զօրիոտի ,
Եղբօրն իմոյ հարազատի ,
Ծնօֆիկ ու մայրս անդու թք անխիղճք ,
Այրեր էին վառուան թոների :

« Ա՛հ , Ծնօֆիկ , եղբայրս ըսաւ ,
Ի՛նչ կը զուրցես , այդ ի՛նչ մեծ ցաւ ,
Երեկամունքըս կարտեց ,
Երեսիս դոյն այլայլեցաւ :

« Ա՛հ , այս ի՛նչ էր որ լսեցի ,
Ի՛նչ սև օրեր գլխուս բերի ,
Կենացըս մէջ այսպէս դժբաղդ ,
Չհանդիպեցայ երբէք ես ցարդ :

« Ա՛հ , իմ սրտիկս այրեցաւ ,
Աղիքներըս դալարեցաւ ,
Չը գիտացի թէ ի՛նչ եղայ » ,
« Բարէ՛ , թաղաւոր մարեցաւ . . . » :

Սրսկելով ջուր երեսին ,
Հազիւ եկաւ խելքն գլխին ,
« Ալ Ծնօֆիկ մեր ձեռք չերթար ,
վնաս ածել մեր քրոջ անձին :

« Ա՛հ , երկու կողմէն մեծ են վտանգ ,
Ի՛նչ տի ընեմք , ի՛նչ մենք ասանկ ,
Ա՛հ , մեր աչքեր թող խաւարէր ,
Չը տեսնային մեր քոյրն ասանկ :

« Ա՛ռ մեր քաղցը քոյրն քեզի յանձնեմք ,
Տար ի՛նչ կընես , մեք չը դիտեմք ,
Չի մենք այսպէս երկու վնաս ,
Տեսնալ , ժուժել ո՛հ չը կարեմք » :

Ծնօֆիկի ուղածն եզաւ ,
Իր չար մտքին կամքին հասաւ ,
Իսկոյն ինձի եղբօրս քովէն ,
Խլեց զերդ գայլ առեց տար՛աւ :



ԴՐՈՒՍԳ. ՏԱՍԵՆՐՐՈՐԻ

Մինչ Շնօֆիկ եղբօրս գրկէն ,
Դժբաղդս խեց չարաչար ,
Իբրև դառնուկ մի կաթնասուն ,
Սօրէն կտրեն տարածամ :

Հարկանելով քթիս բերնիս ,
Հեռու տեղեր դիս տարաւ ,
Եւ բիւր աղբի նախատանօք ,
Անհուն գաշտիմ՝ մէջ դրաւ :

Ո՛ւր ո՛չ գոյր մարդ , ո՛չ ապաւէն ,
Եւ ո՛չ մի շէն , ո՛չ թռչուն ,
Մինակ երկինք լոկ կերէէր ,
Սասեղօք լի զարդարուն :

Չեւներս ոտներս ամուր կապեց ,
Զինչ մահապարտ ի զնտան ,
Եւ երկսայրի սուրն ի ձեռին ,
Կանգնաւ վրաս պահապան ,

« Օ՛խ , պօռաց այս թշուառական ,
Խոժոռադէմ պժգալի ,
Շատ ճիգ թափեալ ես չարաչար ,
Վ՛աչ , մինչև օրս այս տեսի ,

« Մանի՞ցս անգամ՝ զրպարտեցի ,
Որ բառնայի կեանքըդ չար ,
Հաղիւ հասայ նպատակիս ,
Օ՛խ , 'տի մարթեմ՝ չարաչար :

« Ուր են եղբայրքդ որք սիրէին ,
Զքեզ իւրեանց հաւասար ,
Թող գան թափեն յիմ ձեռանէս ,
Տօն կատարեն խրախարար :

« Թշու՛առ աղջիկ և անախտան ,
Դու մեր սիրոյն խութ և խոչ ,
Երբ մայրդ Ալա ինձ կը սիրէր ,
Դու կամէիր ասել ո՛չ :

« Մեք համարձակ քո կասկածէն ,
Զը պաշտեցինք մեր կըքեր ,
Ուստի պիտի կտրեմ ոտներդ ,
Յայանի գործեմք մեր մեղքեր :

« Մինչ հակառակ դու մեր կամաց ,
'Տի յայտնէիր մեր ամօթ ,
Ես ալ կտրեմ՝ քո բազուկներդ ,
Բերեմ քեզի մահուան բօթ » :

Երբ զայս ասաց հըրէջն անխիղճ ,
Թեւադրեալն բանսարկուէն ,
Սատոյիկ ուժով զարկաւ կտրեց ,
Երկ՝ բազուկներս յարմընկէն :

«Մինչ կամէիր Սատան լինել ,
Մեր քաղցր սիրոյն վայելման ,
Ես ալ սլիտի սրունքներըդ ,
Ծնկացդ կտրեմ աննըման » :

Զայս ասելով ահագնութեամբ ,
Վերցուց մեծ սուրն երկսայրի ,
Զարկաւ կտրեց երկու ծունկէս ,
Զիս եթող աստ խղճալի :

Արդ ապաժոյժ թաւալգլոր ,
Կարմիր արեամբս ՚ի լճին ,
Ա՛հ , թափէի յորդ արսասուս ,
Զէտ անձրևու պղպղակին :

Այն ինչ անպարտ արիւնս թափեալ ,
Սար ու ձորեր սարսեցին ,
Աւա՛ղ , Լուսին և աստեղներ ,
Առ հասարակ ողբացին :

Ճիւղոն անդուժ և սևադէմ ,
Որինասհեղն իմ կայեն ,
Սբէլս եթող արեամբ ներկեալ ,
Ինքը կտրեաւ անօրէն :

Ո՛հ , սոսկալի էր այս գիշեր ,
Ինձի համար չարադէմ ,
Օրհասականն իմ արդ եհաս ,
Ալ չեմ գիտեր ես ո՞ւր եմ :

Կը կսկըծան իմ ա՛հ վէրքերս ,
Տեղէմ՝ չունիմ մէկ դարման ,
Արեանս գետեր դեռ չեն դադրեր ,
Սարսուռ պատեաց զիս համայն :

Լուսին , Լուսին , է՞ր չես ծագեր ,
Քո ըյս երկնից կամարէն ,
Սարեր ձորեր որ զարդարուն ,
Քո Լուսափայլ երեսէն :

Ես խղճալի աղլիկ մըն եմ ,
Անտ անձեռ աստ լքած ,
Գոնէ նայիմ քո սուրբ երես ,
Քեղմով ապրիմ նսեմացած :

Ա՛հ , ո՛չ բարեկամ և ո՛չ ընկեր ,
Ո՛չ ո՛ք չունիմ առ ընթեր ,
Եւ ո՛չ երկնից թռչունքն անդամ ,
Կուգան լինին ինձ ընկեր :

Ա՛հ , ո՞ւր են իմ սիրուն եղբայրք ,
Թող գան ինձի լան այժմիկ ,
Որ սիրէին անյադ անյադ ,
Ինձ յարուցին թշնամիք :

Ա՛հ , ուր են իմ աղախիններս ,
Չը գան ինձի երեւան ,
Բարեկամք իմ և մերձաւորք ,
Ամէնքն ինձի ուրացան :

Ա՛հ , ի՞նչ սև ժամ ի՞նչ սև գէշեր ,
 Որ ինձ այսօր պատահեաց ,
 Գազաններու ահ և սարսափ ,
 Գողումը զիս պաշարեաց :

Քանի՛ ողբամ ցաւերս ամէն ,
 Նոր ՚ի նորոյ նորոգին ,
 Գուցէ արտօսը հեղեալ յերկիր ,
 Վշտերս անով ամեքին :

Մինչդեռ անցեալ տարի այսօր ,
 Իմ տարեգարձ կատարուէր ,
 Շքեղաշուք և տօն վսեմ ,
 Ո՛հ , ամէն ոք փափաղէր :

Մատաղ փափկիկ կայտառ կուսանք ,
 Ինձ կուգային տեսանել ,
 Ուրախութեանս իմ կցորդիլ ,
 Իրենց պարծանք համարել .

Եւ մինչ կանայք մեծ վեհազունք ,
 Ու կոմսուհիք զեղափայլ ,
 Երբ ծալ ՚ի ծալ պէս պէս հանդերձք ,
 Հագուած դային ծանրաքայլ :

Մինչ մանկուհիք մատաղերամ ,
 Քաջիք կօշկօք կարմրափայլ ,
 Վաղվուտելով դային ՚ի տես ,
 Զի՛նչ թաղուհի վսեմափայլ :

Մինչ օրիորդք պարկեշտուհիք :
 Իբրև անբիժ աղաւնի ,
 Թռչտելով իմ սենեակիս ,
 Պար խաղային հրաշալի :

Մինչդեռ եղբայրքս իմ սիրասուն ,
 Անուշ երգօք զանազան ,
 Զիմ տարեգարձ շնորհաւորել ,
 Պարտք կ'զգային սրբազան :

Այն ինչ ծառայքս աղախիններս ,
 Մեծ մեծ մամեր փառաւոր ,
 Լուցեալ տային ձեռնէ ՚ի ձեռն ,
 Ասէին , տօնդ շնորհաւոր :

Վսեմաշուք մինչդեռ տօնիս ,
 Նուագարաններ հնչէին ,
 Քաղցր երգերով զմայլելով ,
 Զուարթ օրերս անցնէին .

Հովիւք սիրուն մատաղ դառնուկք ,
 Ինձի բնծայ բերէին ,
 Եւ Շեփորիկ իրենց ձեռքին ,
 Անուշ ոչխարք կանչէին :

Ուրախութեան այս հանդիսիս ,
 Հրեշտակք կարծես բաղձային ,
 Եւ արեգակն պայծառ լուսով ,
 Վրաս ծագէր ծիրանին :

Ա՛հ , փառաւոր էր այն սուրբ օր ,
Այն օր պայծառ զուարճալի ,
Ես պճնազարդ հանդիսին մէջ ,
Արդէն մի կոյս դեղանի :

Ա՛հ , փառքերուս ո՞ր մէկ պատմեմ ,
Ո՛չ թիւ ունէր ո՛չ համար ,
Վայելչութիւն յիս փափազէր ,
Ես ունէի շատ յարմար :

Մինչ անտառաց մէջ ճեմէի ,
Ծաղկունքն բոլոր շար ՚ի շար ,
Զիս կարծէին իրենց ընկեր ,
Որոշելու չկար ճար :

Մինչ պճնապանծ զարդարուէի ,
Փափուկ զարդերս մեծաբին ,
Տեանողները ապուշ կրթեալ ,
Երանելով զմայլէին :

Ապարանջան բազուկներուս ,
Ոսկի օղակ ականջիս ,
Այնպէս փայլուն կը շողշողէր ,
Զինչ արեգակն ՚ի յերկինս :

Մանեակ ոսկի պարանոցիս ,
Կը փարփար գէտ Լուսին ,
Անդամանդեայ քարով շարուած ,
Կը նմանէր փայլածուին :

Ասոնք ամեն անցան դնային ,
Անդամոցս հետ հաւասար ,
Աճեցին ցաւքս և բաղմացան ,
Մինչև եղան մէկն հաղար :

Լերինք , Բլուրք , զիս ողբացէ՛ք ,
Մարդիկներու փոխարէն ,
Եւ արձագանք իմոյ լալոյս ,
Թող հասնի ձեզ ձորերէն :

Ութ օր այս անդ դիշեր ցորեկ ;
Ա՛հ՛ ով դողով անցուցի ,
Եւ շարունակ ես անդադար ,
Դժբաղդութիւնս ողբացի :

Մինչև վուքր ինչ իմ վերքերըս ,
Ամբեցան պնտեցան ,
Այնուհետև ես ակնդ էա ,
Որոնեցի մի դարան :

Ա՛հ , արշալոյս բացուաւ այսօր ,
Ո՛չ թուշուն կայ և ո՛չ ձայն ,
Շողն արեգին հա տարածուաւ :
Սակայն այն ի՛նչ է , զի՛նչ այն :

Որ հեռուէն կը նշմարուի ,
Փոքր ինչ աղօտ կերևի ,
Միթէ անտ՞առ է թէ այդի՞ ,
Եւ կամ այլ ի՛նչ , որ լինի :

Ա՛հ , ոտք չունիմ որ դնարով ,
 Գուցէ գտնեմ ինձ պարէն ,
 Հոս մնալով պիտի մեռնիմ ,
 Ա՛հ , անօթի ՚ի սովէն :

Ա՛յլ , որ համայն թռչնոց մարդկանց .
 Ապաւէն ես կեցուցիչ ,
 Դու խոստացար ինձի բազմիցս ,
 « Ես քեզ եղէց յանձանցիչ » :

Գիտե՞ս որ ես անմեղ անպարտ ,
 Զուր կը կրեմ այս տանջանք ,
 Դո՛ւ տաս ինձի համբերութիւն ,
 Դո՛ւ ես եղեր իմ փրկանք :

Ես այս մասին թէ և անմեղ ,
 Բայց քօ դիմացդ շատ անդամ ,
 Մեղանչեր եմ իբրև զմարդ ,
 Դ՛ու ինձ պահէ անսասան :

Եւ դ՛ու որպէս մարդասէր Տէր ,
 Տ՛ուր ինձ փոքր ինչ ոյժ և կար ,
 Գլորուելով երթամ հասնիմ ,
 Դիտած տեղրս ակնկալ :

Կարծես երկնից մի զօրութիւն ,
 Անմիջապէս ինձ զարթոյց ,
 Գլորուելով զլրուելով ,
 Իմ դիտած տեղս զիս հասոյց :

Տեսայ որ ի՛նչ այդի էր այն ,
 Սիրուն աղւոր պտղալից ,
 Գլորուեցայ մի անկիւնը ,
 Ուր ծառեր խիտ և կից կից :

Գիչեր սահիմ գաղտագողի ,
 Ուտել խաղող կշտապինտ ,
 Յորեկ կայի իմ պահարանս ,
 Ո՛չ ոք ատնէր զիս անդ պինտ :

ԴՐՈՒԱԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ

Ձեզ ասեմ Ադամայ որդիք ,
Բսածներուս ականջ դրէք ,
Այս աշխարհքիս սուտ վուտ վառքին ,
Ամենեւին դուք մի՛ խարուէք :

Քանի՛ որ դուք այս խարուսիկ ,
Կենցաղոյս մէջ օրեր ունէք ,
Ձանացէք նեղ դուռ մտանել ,
Ուղածներըդ հոն կը գտնէք :

Ո՛չինչ ունայն է այս աշխարհք ,
Վայելչութիւն բընաւ չունի ,
Թէ ունենայ ալ փոքր ինչ է ,
Հաստատութիւն երբէք չունի :

Անցաւորիս երջանկութեան ,
Դու մի՛ խարուիր մի՛ տար ինքզինքդ ,
Որ յաջորդած թշուառութեան ,
Ցաւերդ չանէ բաղմապատիկ :

Բաղդէն բնաւ դու մի՛ խարուիր ,
Թէ քեզ բերէ երջանկութիւն ,
Տոկոս ունի , վրայ կառնէ ,
Երբ յաջորդէ թշուառութիւն :

Ո՛րքան անյաղ վայելքը ես ,
Ստոր ունայն պատրուակներ ,
Մէկին հարիւր պիտի տուժէ ,
Քեզի տունէդ առնէ երեր :

Փորձ առեալ եմ ուստի կարեմ ,
Փորձանւորաց թիկունք լինել ,
Այ՛ն այ՛ն , ես խարուեցայ ,
Բաղդէս դալիք չը դուշակել :

Եթէ չափով երջանկութիւնս ,
Վայելէի երկիւղալի ,
Վնտանելի թշուառութիւնս ,
Զիս չէր տիրէր սարսուելի :

Որուն համար այսօր այսպէս ,
Թշուառութեամբ անմխիթար ,
Եւ անսուաղ կը տառապիմ ,
Ուտել պտուղ , զի չունիմ ճար :

Թ՛ող զիս լացցեն աշխարհ ամէն ,
Սար ու ձորեր ծառեր բոլոր ,
Եւ թռչուններ առ հասարակ ,
Զի եղէ ես իբրև զլոր :

Ո՛ւր , ո՛ր երբեմն զարդարուած ,
Սեղանս լցուած բարութեամբ լի ,
Արդ անօթցած կը որոնեմ ,
Կարօտով եմ քիչ սև հացի :

Ո՛ւր , ո՛ր երբեմն անուշահամ ,
 Օշարակներս զարմանալի ,
 Արդ պապակած կը ծարաւիմ ,
 Իբրև եղջիւր կաթ մբռ ջրի :

Ուր , ո՛ր երբեմն կերակուրներս ,
 Ախորժահամ հիանալի ,
 Արդ կը ցանկամ արժանանալ ,
 Գո՛նէ տաքուկ լսկ ապուրի :

Ու՛ր , ո՛ր երբեմն անկողիններս ,
 Փափուկ շինուած փետրով ՚ի լի ,
 Ասոնք անցան զարդերուս հետ ,
 Արդ եղեր եմ գեանախշափ :

Ո՛ւր , ո՛ր երբեմն սենեակներուս ,
 Առաստաղներն էր զմբուխտեայ ,
 Այժմիկ այսպէս կոճղ կիսայրեայ ,
 Կըժկըվերեմ ես բացօթեայ :

Ու՛ր , ի՛մ փափուկ ձեռներս սունբրս ,
 Որ կօղնէին ինձի պատրաստ ,
 Ո՛հ , Շնօֆիկ կտրեց զաննոր ,
 Այսպէս խղճուկս զթող տապաստ :

Ո՛ւր ծառաներս աղախններս ,
 Չեռն ՚ի գոտի և ակնկոյր ,
 Հիմա ոչինչ , մէկ մը չունիմ ,
 Որ զիս ընէ թաւալղլոր :

Ասոնք ամէն անհետացան ,
 Բաղդէն բերած բաղդը տարաւ ,
 Փոխան սոցա տուաւ ինձի :
 Կսկիծ անթիւ և վիշտ հապար :

Ես չուղելով ապաշխարել ,
 Ձիւն բերեցի դւխիս ՚ի վեր .
 Նմանեցայ այն Աղուեսին ,
 Որ պատն ՚ի վեր զուր կը ցաթկեր :

Գիտե՞մ որ շատ բաղձանք ունիս ,
 Կուզես լսել այս պատմութիւն ,
 Ես ալ յօժար եմ պատմելու ,
 Լսե՛ո , լինիս հոգւով արթուն :

« Օր մը Աղուէս շատ անօթցած ,
 Մահուն սովէն կը տանջուէր .
 Ուզեց գտնալ իւր ապրուստիկ ,
 Վասն այն արթուն կը պըտըտէր :

« Այդիմ , գտաւ պարսպապատ ,
 Բարձր անառիկ Աշտարակով ,
 Դուռը դոց էր , տեղ մը չունէր ,
 Մինակ մէկ ծակ խիտ նեղուանցքով :

« Բարակնալով բարակնալով ,
 Հաղիւ այգիի մէջ մտաւ .
 Բազմատեսակ պտուղներէն ,
 Ազահ ազահ անհոգ կերաւ :

« Ո՛չ պահապան ունէր այդին ,
 Եւ ո՛չ այլ ո՛ք չէր տեսնուէր ,
 Աղուէսն ուրախ ցաթկուտելով ,
 Այսպէս անցուց շատ մը օրեր :
 Եւ գիրացաւ ստուարացաւ ,
 Պարարտացաւ խիտ չափազանց ,
 Օր մը յանկարծ բուն միտք եկաւ ,
 Խնդիր ելաւ նեղ ծակի անցք :
 « Թէ և դտաւ , ՚ի զուր սակայն .
 Փորձով փորձեց շատ քրանաթոր ,
 Այլ չը կարաց անկէց ելնել ,
 Որովհետեւ ուռած էր փոր :
 « Ատդին անդին կը վազվաւորէր .
 Հեւար ցաթկէր պատերն ի վեր ,
 Անալ ունայն , որովհետեւ ,
 Այնչափ կար զօրութիւն չունէր :
 « Դարձեալ ծակի դիմացն եկաւ ,
 Զինք կը կշռէր յուսահատած .
 Դրսէն Աղուէսմ անցնելով ,
 Ասաց « Եղբայր զին՞չ դու արտմած » :
 « Պատմեց վիճակն հառաչելով ,
 Կամէր զնկերն ՚ի դուր շարժել ,
 Նա « Հ՛ը ըրաւ ծիծաղելով ,
 Արդէն քեզի այդպէս պիտէր » :

« Անմիտ , երբէ՛ք չը խորհեցա՞ր ,
 Արդի վիճակդ աղէտալի ,
 Փոխան այդչափ դիրանալուդ .
 Վերջ նիհարն ալ պէտք է քեզի :
 Ինչպէս առաջ նոյնպէս ալ վերջդ :
 Որ այդ ծակէն դիւրաւ ելնես ,
 Իմաստունէն չառի՞ր խրատ ,
 Որ ըրածիդ վերջ մտածես » :
 Այսպէս ալ ինձ պատահեցաւ ,
 Զը խորհեցայ կենացս վախճան ,
 Օրս անցուցի կեր ու խումով ,
 Ահա հալուիմ մաշուիմ պիտի :
 Այ՛ն այ՛ն ես տակաւին .
 Շատ ցաւերու արժանի եմ ,
 Ո՛վ Տէր Յիսուս , զօրացո՛ւր զիս ,
 Հոգւով սրտիւ քեզ համբերեմ :
 Սակայն այս ի՞նչ ոտքի ձայն է ,
 Որ կը լսուի Խղիկէս ՚ի դուրս ,
 Այ՛ն տեսի որ երկու մարդ ,
 Անցան դնային այսմիկ պահուս :
 Ճանապարհորդ էր խեղճ յողնած ,
 Երկար ուղէն խոնջեալ եկած ,
 Խաղող ուղեց այդեպանէն ,
 Կերաւ ծառի մը տակ նստած :

Մեր ուղևոր այգեպանին ,
 Ասաց , « ախրէր Սրապիոն ,
 Ար՞դեօք ո՞վ է այս այգոյն տէր ,
 Որ ողորմիս տամ իր հողւոյն » :

Ս.յս այգին է ըստարապետ ,
 Գուլիէլին այն զօրաւոր ,
 Որ Զօրիոս թագաւորին ,
 Գունդն հրահանգէ խիստ հնարաւոր :


« Եւ Մարտինոս նորա որդին ,
 Սիրուն կայտառ է պատանի ,
 Անոր նման ո՛չ ո՛ք չը կայ ,
 Ամէն ձիրքով պերճ շնորհալի :

Կուղէ զանի ամուսնացնել ,
 Աղջիկ խնդրէ նա շատ տարբեր ,
 Որ աշխարհքէս մէկ հատ լինի ,
 Մէյ մնալ չ'լինի անոր ընկեր » :

Երբ այգեպան խօսքը կտրեց ,
 Պանդուխտ ցյադ խաղող լափեց ,
 Վերջը տուաւ իր « ողորմին » :
 Առաւ քայլեց շուտմ' իր ուղին :

Երբ լսեցի Զօրիոս անուն ,
 Որ այգեպան ասաց անոր ,
 Գալարեցաւ աղիք փոքիս ,
 Ահ , իմ եղբայր երախտաւոր :

Արդեօք մէյ մնալ քեզի տեսնե՞մ ,
 Որ այնպէս սէրդ վայելցի ,
 Եթէ կարօտ մնալով աւա՛ղ ,
 Սև գերեղման պիտի իջնեմ ,



ԴՐՈՒԱԳ ԵՐԿՈՏԱՍՍՆԵՐՐՈՐԻ

Գուլիէլի ընծ Մարտինոս ,
 Այգիի մէջ ելաւ 'ի դբոս ,
 Տեսնէ որ ի՞նչ խաղողիկներ ,
 Պըտղուած , շատն ալ ճմլուէր :

Այգեպանին 'պա բարկութեամբ ,
 « Է՞ր չես նայիր այգին հսկամբ ,
 Ահաւասիկ ամեն գողեր ,
 Ճմուեր տարեր են խաղողներ :

Այսուհետեւ պիտի աչբես ,
 Արթուն կենաս , շրջես . դիտես ,
 Գողն անպիտան և անիրաւ ,
 Բռնես ինձի բերես կանխաւ :

« Անոր պատժեմ 'խիստ չարաչար ,
 Որ զսպէ ինքն իւր արար չար ,
 Լսողներուն խրատ լինի ,
 Որ չը գործեն չարիք հաստատ » :

Ո՛հ , այս պահուս ես իմ տեղիկս ,
 Կայի սարսեալ և գողայի ,
 Որովհետեւ արողն ես եմ ,
 Անշուշտ պիտի օրմ' պատժուիմ :

Ձի ձեռք չունիմ մէկիկ մէկիկ ,
 Որ փրցունեմ խաղողն հատիկ ,
 Ուստի բերնովս ուտեմ լափած ,
 Վասն այն թափի ճըմրութըուած :

Բայց այգեպան վարձկան խռֆած ,
 Անհող քնէր փոյթ չ'տարած ,
 Ուստի կրկին Մարտինն եկաւ ,
 Յանդիմանեց « չամչնաս ո՞վ չար :

« Գիտեմ որ դու անհող և ծոյլ .
 Քունդ կը սիրես , մեղկես ու թոյլ .
 Որովհետեւ վարձկան հովուին ,
 Ձի՞ փոյթ է դայլք ոչխարք ցրուեն :

« Կեցիր քանի՛ գիշերն 'ի բուն ,
 Ես կը հսկեմ գաղտուկ անքուն ,
 Նայիմ ո՞վ այն համարձակի ,
 Այգիս ընել իր տեղ ոտքի » ,

Այս լսեցի զարհուրեցայ ,
 Ծնկէս 'ի վեր սարսուեցայ ,
 Ուստի վեց օր անչարժ կացի ,
 Անտուաղ օրերըս անցուցի :

Անթութիւնս զիս ստիպեց ,
 Կարծեցի որ հոն չէ քալեց ,
 Ասի կամաց գլորուիմ երթամ ,
 Ուտեմ խաղող շուտ տեղս դառնամ :

Մինչդեռ խաղող ես կուտէի ,
Մարտինոս քովս յանկարծ տեսի ,
Որ կայնամ էր ապուշ ապուշ ,
Զիս կը գիտէր շատ մը անյուշ :

Հետոյ քովքս եկաւ մեղմիկ ,
Ասաց « անունդ ի՞նչ է աղջիկ ,
Ես քո սիրոյն շատ յարեցայ ,
Դորով դժով քեզ մօտիկցայ » :

Մինչ զայս տեսայ , լռիկ մնջիկ ,
Արտասուեցի դառն սաստիկ ,
Զի կենացս մէջ բռնուած չէի .
Զօրէն գողոյ աւազակի :

« Բնա՛ւ երբէ՛ք դու մի՛ վախնար :
Դու իմ՛ , ես քեզ շատ սիրահար ,
Այդ վայելուչ գեղ զոր ունիս ,
Ծառայ արար դիս զդերիս ,

« Ոտքիդ ձեռքիդ ես հոգ չունիմ՛ ,
Իրաւցնէ քեզի կառնեմ՛ ,
Սակայն ինչ՞ու այդպէս եղար ,
Ա՛րդեօք քե՛զ զի՞նչ պատահեցաւ » :

Միտքըս դրած եմ հաստատուն ,
Որ չը խօսիմ հեա ո՛չ մէկում՛ ,
Զի չը լինի այս առիթով ,
Համբերութիւնս հատնի շուտով :

Մինչև հաճոյ երկնից կամաց ,
Պարագաներս լինին պատրաստ :
Այնուհետև պիտի յայտնեմ ,
Պատահարներս որ կրերեմ :

Վերցոյց ինձի արարաւ իւր տուն ,
Այնտեղ կանչեց իւր Պապ Մամուն ,
Ասաց « ի՞նչու դուք անհանգիստ ,
Ինձ ամուսին կը վնտուէք պլնատ :

Ահաւասիկ ես իմ ուղած ,
Արդէն գտայ ծառերուն տակ ,
Ճակատագիրս և իմ՛ նոր բաղդ .
Այս վճռեցին այո՛ հաստատ :

Շուտ մը կանչէ՛ք քահանային ,
Պէտք հարսանեաց թող հոգացուին ,
Եւ Մունետիկ բարձր կանչէ ,
Դու լիերի տղան պսակուէ :

« Հայր մայրն ասեն , զաւակս որդի՛ .
Քեզ ո՞ր կոմսի աղջիկ պիտի .
Ոտքով ձեռքով աղւոր բարւոք ,
Քեզ կը բերեմք դու լեր անհող .
Դա՛ կոծղիկ է , մեզ չի վայլեր ,
Ամօ՛թ մեզի կ'ասեն շատեր ,
Դա՛ լեզու ալ չունի եղեր ,
Անդամալայծ , խեղ և համեր :

Այդ հրէջ է և մրսի գունս՝
 Գծբաղառութեան գուշակ է շոյտ,
 Այդ ո՞ւր տեղէն գտար բերիբ,
 յաջողութեանս խոչ ցրցուցիր:

Մենք չե՛նք կրնար իրաւունք տալ,
 Միթէ ատո՞ր արժանացար,
 Մնունս բարձր է սպարապետ,
 Ես ունենամ հարսը անպէ՛տ:

«Չե՛մ գիտեր չե՛մ՝ Մարտինն ըսաւ
 Կը պսակուիմ անշուշտ կամաւ,
 Մինչդեռ Օրէնք մեր վկայեն,
 Հաւանութեամբ զիրեար առնեն:

Եթէ աւել ածող կուզէք,
 Գնացէք բերէք ո՛վ որ կրնարէք,
 Իսկ թէ կին է ինձի համար,
 Անմիջապէս կառնենք զիրեար:

Ինձի համար հիանալի,
 Կառք պատրաստեց Փողոսկրի,
 Շատ ծառաներ աղախիններ,
 Պատած տեսայ իմ չորս կողմեր:

Իսկոյն քարոզ կարդացուեցաւ,
 Հարսանեաց տօն հանդիսացաւ,
 Շատ փառաւոր և շատ վսեմ,
 Մինչ տեսողաց զարմանք կալաւ:

Այս հանդիսիս ներկայ էին,
 Երեք եղբարք իմ միասին,
 Բայց յոյժ արտում և շատ տարբեր,
 Այն օրերէն որ տեսեր եմ:

Ա՛հ, կերեի ասոնք ինձի,
 Համար ունին սուգ արտմալի,
 Իսկույն անոնք ես լաւ ճանչցայ,
 Սակայն անոնք զիս չիմացան:

Հարսանեացս օր էկած էին,
 Մայրբոս Ալա հետ Շնոֆիկին,
 Երբ նա տեսաւ կասկածեցաւ,
 Այլ ի՞նչ օգուտ բանը անցաւ:

Իմ ծառաներս և նաժիշտներս,
 Բոլոր պատրաստ եկեր են տես,
 Ասոնք ամեն ճանաչեցի,
 Բայց հաստատուն ուխտս պահեցի:

Ո՛չ մէկիմ հետ ես խօսեցայ,
 Եւ ո՛չ ոքի ծանօթացայ՝
 Կրրած վշտերըս թաղուցի,
 Ժամանակին ըսպասեցի:

Հարսնահրաւէր հանդիսադիր,
 Եկան հասան շատ սպաներ,
 Եւ Զօրիօս մեծ թաղաւոր,
 Կարիճ եղբայրս քաջ զօրաւոր:

Այնուհետև Սպարապետ ,
Կեսրայրն իմ յոյժ յաղթ զօրապետ
Նոցայ ետին փետասս և ես ,
Կառքը նստած էինք անտես :

Մեր ետևէն չատ զօրաւոր ,
Մարդիկ վառեալ քաջ տիգաւոր ,
Յառաջ անցած խուռն զօրքեր ,
Ասդիս անդին նուազածուներ :

Կայտառ ընտիր Նախարարներ ,
Եւ շուրջ պատեալ հրացանակրեր ,
Յուրով էին կուսանք փափկիկ ,
Բաղում եկեալ և Կոմսուհիք :

Աւաններաց աւազ իշխանք ,
Ժողովրդեան մեծ պարոնայք ,
Ծանր հազուած համեստ տիկնայք ,
Եւ պճնազարդ էին կանայք :

Քաղցր անուշիկ երգ գուօանաց ,
Գեղգեղեն ձայնք նուազարանաց ,
Բազմատեսակ թնթանթներ ,
Դղորդ հանեն առնեն երեր :

Աղբի աղբի ատրճանակներ ,
Կայծ ցոլացնող հրավամբիւշաներ ,
Խաղան պարեն բաղմականներ ,
Եւ շատահնար գերասաններ :

Քաղաքն ամէն կայր 'ի զնին ,
Վահանաւոր թրախաղին ,
Յարչալուսոյ առաւօտին ,
Մինչ արեգակն տիրէր երկրին :

Արծաթափայլ իւր ճաճանչներ ,
Վեր հանդիսիս տարածանէր ,
Անոր լոյսէն հաղար հաղար ,
Ագամանդներ կը փալկլար :

Մանկունք քաջիկ և աղջիկներ ,
Կանանչ կարմիր էին հագեր ,
Զինչ հաշտութեան աղեղն յերկինս ,
Կամար կապէր էին զարդեց :

Նժոյգ աշխէտ ձիք սրբընթաց ,
Երիտասարդք մանկունք հեծած
Արագ որէն արչաւելով ,
'ի նպատակն հասանէին :

Գառնան անտի զուարթօրէն ,
Այս հարսանեաց է իսկ օրէն ,
Կարճն ասեմ ուրախութիւն ,
Մարդիկ դարձոյց մէկ մէկ զուարթուն :

Շուք հանդիսիս ո՞ր մէկ պատմեմ ,
Ո՞ր մէկ ճառեմ , ո՞ր դրուատեմ ,
Մինչդեռ անհատ գրադիրներ ,
Անդամ չ'կարեն արձանագրել :



Այսպէս գնացինք Եկեղեցին ,
 Ինձի տարան Բեմին առջին ,
 Եւ յատկացած վրայ դահին .
 Զինչ թագուհի բազմեցուցին :

Ուրիշ դահմըն ալ իմ փեսայիս ,
 Դրին նստաւ աջոյ կողմիս ,
 Բոլոր պատած յԱսպիս դարով ,
 Մէջեր յեռեալ մարդարիտով :

Աւագ երէց պերճ քաղաքին ,
 Շուրջառ վրան առած անդին ,
 Եւ Եկեղեցւոյ սեղաններ ,
 Ադամանդի փայլէն շողեր :

Մինչ բիւրաւոր մոմեր վառած ,
 Տեանողք ամեն կային ապշած ,
 Հանդիսատեսքն համօրէն ,
 Մոմեր վառած , ա՛յս էր օրէն :

Քահանաներ և դպիրներ ,
 Սարկաւազներ ու մանկախներ ,
 Ուսող ընկեր էին հագուած ,
 Մաքուր ընտիր կան պատրաստուած :

Սուրբ խորհրդին կատարուելուն ,
 Ամուսնութեան ուխտ կապելուն ,
 Աւագ երէցն ե՛րբ ըսկսեց ,
 Հանդիսականն ամբողջ լռեց :

Մեղի դասեր աւանդեց շատ ,
 « Այսուհետև դուք էք մէկ հատ ,
 Ասաց տէ՛ր էք միմեանց կ'օգնէ՛ք ,
 Ապա թէ ո՛չ , արդ մի՛ ուխտէք » :

Հաւանութիւն մեղձէ առաւ ,
 Նորէն իմ թեւ ձեռքին տուաւ ,
 Ասաց « Աստու՞ած 'ի մէջ սոցա ,
 Որ չ'սասանուին երբէք սո՛ք » :

Զարմանալի խորհուրդ Պսակիս ,
 Քստմնեցոյդ ոսկերքս որ յիս ,
 Բարէ՛ , զարմա՛նք մինչ անձանօթ ,
 Երկու անձինք լինին մի յօդ :

Ժամէն ելանք եկանք 'ի դուրս ,
 Հանդիսականք այսմիկ պահուս ,
 Միահամուռ աստ կանչեցին .
 « Կեցցէ՛ թագուոր և թագուհին » :

Դարձեալ այսպէս կառքով փառքով ,
 Ուղին անցանք մեք ճեմելով ,
 Ոսկի տեղաց իմ նոր փեսայն ,
 Զինչ Արտաշէս Հայոց արքայն :

Ո՛հ , ձեռք չունիմ որ Մարդարիտ ,
 Տեղայնեմ զէս Սաթկենիկ ,
 Իմ այս պաշտօն ազախներս ,
 Կատարեցին չրբին անտես ,

Այն ինչ հասանք մեր պալատին ,
Վաս բազմոցներ պատրաստ կային ,
Իմ նոր փեսայն երբ բազմեցաւ ,
Զիս ալ իր աջ կողմը առաւ :

Նուագածուք ու պարողներ ,
Առին երգել , ցնծալ , կայթռել ,
Ո՛չինչ պակաս հարսնիքս չունէր :
Մինակ ձեռներս և ոտներս էր :

Մինչ սեղանի զանգակ զարկին ,
Կերակուրի հրաւիրեցին ,
Թէ և նոցա սեղանակից ,
Ուրիշներէն կերակրուէի :

Եօթն օր տեւեց հանդէսս այս մեծ ,
Հանգստութեան զանգակ զարկեց ,
Ամեն մէկ մարդ գնաց իր տուն ,
Ես զարմացայ գիշերն անքուն :

Մինչ խորհեցայ դառն փիճակս ,
Յաջորդած բաղդս անակնկալս ,
Զարհուրեցայ ճակատադրէս ,
Ստոյգ գիտեմ փորձէ պէս պէս ,


Այո՛ , երկինք շատ կ'հառաչեմ ,
Որ փառքերուս արժանի չեմ ,
Սակայն Դո՛ւ ինձի ազատէ ,
Եկեալ հասեալ՝ նոր փորձանքէ :

Իրաւ իմ սէր իմ նոր փեսայն ,
Միւրեց գլթով զիս շափաղանց ,
Նոյնպէս կեսուրս և իմ կեսրայրս ,
Ինձ խանդակաթ կացին առ այս :

Տարուան երկուք երբ լմնցաւ ,
Զօրիտէն հրաման եկաւ ,
« Դաւք Գուլիէլ ու Մարտինոս :
Զօրքերն առէք գընացէք Նոս :

Զի այն տեղի ապստամբներ ,
Գեղեր շատ են ասպատակեր ,
Գնացէ՛ք անսնց շատ մը զարկէք ,
Յաղդութեան դրօշ բարձրացուցէ՛ք »

Որովհետեւ թաղւոր եղբայրս ,
Զիս չը ծանեաւ , և ոչ այլ ոք ,
Գէթ ինայէր իմ փեսային ,
Զը ցաւցընէր զխղճալիս :



ԳՐՈՒԱԳ ԵՐԵՔՏԱՍՍՆԵՐՐՈՐԴ

Ո՛հ, ես գիտեմ արդէն իմ բաղդս,
 Որ կը փորձէ զիս չարաչար,
 Թշուառութիւնս մահազուշակ,
 Երբէք չունիմ մէկ մը սատար:
 Ծնած օրէս արդէն սև էր,
 Ճակատագիրս, և անյաջող.
 Վասն այն ուրախութեանցս մէջ,
 Չի տար կանգնել ինձի կնթող:
 Մէջ աշխարհիս տեսարանին:
 Ես մատնանիչ ոմն եմ դարձած,
 Եւ տարաբաղդ այսպէս այնպէս,
 Սիրէլիէս եմ զրկուած:
 Ո՛հ, մինչ եղբարաքքս հարազատ,
 Չիս սուրբ սիրով կը սիրէին,
 Տարազրեցայ ես սնատեն,
 Անհուն դաշտերն առի բաժին:
 Մինչ սուստիկ սէր ամուսնոյս,
 Փոքր ինչ ցաւերըս մեղմեցին,
 Նա աւանիկ պատերազմի,
 Պիտի երթայ, եղովկ անձինս:

Ո՛հ ո՛վ գիտէ մէյնս ալ տեսնամք,
 Մեք իրարու դէմք խանդաղին,
 Եթէ զնդակ մի գլորուած,
 Անդէն տանէ դլուխս անդին,
 Ա՛րդեօք իմ քաջ և զօրաւոր,
 Փեսաս տեսնամ՝ ես տարփալի,
 Եթէ մահուան բօթըն առնեմ,
 Լինիմ իսպառ արտասուալի:
 Ա՛րդեօք ձմեռն այս բ.քաբէր,
 Պիտի անցնէ՞ թթթեագոյն,
 Եւ սորա տեղ զուարդերես,
 Ե՛րբ ողջունէ ինձի Գարուն:
 Ա՛րդեօք այս մութ խաւար գիշեր,
 Պիտի անցնի մեր վրայէն,
 Եւ փոխարէն ո՞ տայ մեղի,
 Խրախալի սուրբ Յարութիւն:
 Ա՛րդեօք այս սառն Օղերուն տեղ,
 Գիշեր ցորէկ յար սխրագոյն,
 Իրօք լինի՞ թէ պատահի՞մ,
 Եթէ ունայն խաբէութիւն:
 Ա՛հ, ինձ նման իմ արդանդիս,
 Պտուղն ես է սևաբաղդիկ,
 Մինչ չը տեսնար իր հօր գորով,
 Առ ընթեր իւր սիրափարիկ:

ՄՆ , բարեբաղդ իմ ամուսինս ,
 Մէյմն ալ աչքովըս քեզ տեսնե՞մ ,
 Եթէ կարօտ քո սուրբ դէմքին ,
 Թաց թաց աչկունքըս 'տի կոծեմ :

ՄՆ , իմ ցաւոցըս համեմատ ,
 Ո՛չ ո՛ք թշուառ , ո՛չ ո՛ք դժբաղդ ,
 Սուտ կենցաղոյս մէջ նշաւակ ,
 Յիս կնային ամեն մէկ մարդ :

Մինչ այսպէս ես դառն կողքայի ,
 իմ վշտերօքըս ցաւալի ,
 Պատերազմի զարկին փողեր ,
 Արձագանքը հնչեց սրտէս :

Սմէն կողմէն « մնաք բարեաւ » ,
 Չայներ կուգայ խիստ ցաւալի ,
 « Հայր , մայր , եղբայրք մէյմն ալ ասանկ ,
 Զիրեար գրկե՛նք ո՛հ փարելի » -

Աղեկսուր և յուսահատ ,
 Սսոնք գնացին բաժնուեցան ,
 Եւ կարգն եկաւ իմ ամուսնոյս ,
 Պալատն ամեն թունտի ելան :

Ո՛հ , ո՛ւր կերթաս մեր թագ պարծանք ,
 Չեր փոխարէն մենք կը զոհուինք ,
 Որովհետեւ ձեր խնամքներ ,
 Սուստօրէն վայելեր եմք :

« Ո՛հ , ո՛ւր կերթաս ամբիժ գառնուկ ,
 Մօրըդ թողնես ցաւ և կսկիժ ,
 Ո՛հ , այսպիսի ցաւօք վշտօք ,
 Զիս դերեղմա՛ն կիջեցրնես » :

« Այ՛ո կերթամ մայր իմ սիրուն ,
 Մնաս բարեաւ , ո՞ կոմսուհի ,
 Պիտի դնամ զարնել նաւաճել ,
 Մեր Հայրերնեաց չար թշնամին :

Սակայն քեզի շա՛տ կաղաչեմ ,
 Փոխան սիրոյն քո զաւակին ,
 Աղէկ նայիս քո հարսն անմեղ ,
 Զի ես կերթամ , բայց նա ես եմ :

« Ահա այս է վերջին կտակս ,
 Ո՛ մայր զոր ես քեզ աւանդեմ ,
 Գիտե՛ս որ ես նորա սիրոյն ,
 Սիրահարեալ և վառուած եմ :

« Զլինի որ նա վշտացնէք ,
 Արհամարհէք և չարչարուի ,
 Որուն համար իմ անձա դրած ,
 Մեռանելու չափ յօժար եմ :

« Եւ դու կին իմ համեստագեղ ,
 Մընաք բարեաւ մի՛ հոգար մի՛ ,
 Երկինք մեզի է այցելու ,
 Հարկաւ կրնէ մեզի ճար մի :

« Եթէ դարձայց կրկին անգամ,
Արդէն մեր սէր կը վայելեմք,
Ապա թե ո՛չ մեռայց մարտին,
Ձիրեար յերկինս կը ողջունեմք »:

Այ մեր պանդուխտ անձնանուէր,
Ո՛հ, գնաց, ո՛հ, շուտ հեռացաւ,
Մեզի եթող սուգ ու արտօսը,
Եւ հառաչանք ու բաղում ցաւ:

Լուսին շրջանն իւր տա՛լաւին:
Ձէր հասուցած ութն անգամի,
Իմ՝ ծնընդեանս անտանելի,
Ցաւն եւ շուտով յիս զգացի:

Խնունդ զաւակ էր երկորեակ,
Աղջիկ և Ուստըր գեղապանծ,
Շքեղաշուք հիւսնայլի,
Որ տեսած չէր և ո՛չ մի անձ:

Ի՛նչ անպատում ուրախութիւն,
Ի՛նչ ցնծութիւն էր մեզ տիրեց,
Եւ խուժաններ ապուշ հարան,
Ամբոխն խռնէր ՚ի տեսանել:

Մեծ տօն վսեմ և տարեգարձ,
Կատարեցին մեծահանդէս,
Որուն նման ո՛չ ո՛ք ըրաւ,
Հողազնտիս Բնակիչներէն:

Այ չ՛եմ կարող ձեզի պատմել,
Դուք ձեզէն իսկ գուշակեցէք,
Երկնից անհուն ողորմութեան:
Վրայ հողով ըսքանչացէք:

Փառք գոհութիւն նախախնամին,
Արտասուախառն նուիրեցէք,
Եւ մարդասէր նորա գթութիւն,
Ուղիղ սրտէ միշտ գովեցէք:

Այս ի՛նչ զուարթ և ուրախ օր,
Երկինք մեզի աւետեց,
Մեր արժէքէն շա՛տ աւելի,
Բարիք մեզի պարգևեց:

Ուրեմն օրհնեալ իւր սուրբ անուն,
Թող միշտ տօնուի տարփալի,
Իւր հողեղէն ձեռադործներ,
Թող փափագեն սիրելի:

Ձի մեծ արար տէր զառնելն իւր,
Ընդ մեզ սիրովն սիրեցեալ,
Եւ մեք նորա տուած զոյգով,
Լիցո՛ւք յաւէտ բերկրեցեալ:

Ուրեմն փութով մեր սուրհանդակ,
Կայտառ արի սրբնդաց,
Կանչէք շուտով աւետատու,
Ղրկեմ որդւոյս և զօրացս:

« Իմ կենակից Սպարապետին ,
 Աչքը լուսով թող լինի ,
 Եւ ցնծութիւն ուրախութիւն ,
 Հանդերձ որդւոջն վայելի :
 « Թող կատարեն անդ տարեդարձ ,
 Թողանցս իմոց երկոցունց ,
 Եւ տօն լինի վսեմաշուք ,
 Սրտիւ սիրով 'ինոցունց ,
 « Որ իղձ վաճառք շատ ունէին ,
 Այսպէս աւուր հրաշալւոյ ,
 Թող շուտ լսեն և դոհանան ,
 Երկնից տուած մեծ բարւոյ :
 « Ուրեմն գրէ արագագիր ,
 Որդւոյս իմոյ հարազատ ,
 Որ կը ցանկայ մեր սուրբ սիրոյ ,
 Բարև , ողջոյն նմա շատ :
 « Ողջոյն ծնողէդ ու կենակցէդ ,
 Գերդաստանէդ շատ սղջոյն ,
 Գեղ աւետիս կը նուիրեմ ,
 Սիրով սրտիս բաբախուն :
 « Յայտնի առնեմ իմ Մարտինոս ,
 Քաջ և զօրեղ ասպետիս ,
 Աչկունքդ լոյս , որդեակ իմ լոյս ,
 Երկորեակ որդի ունիս :

Աստուած մեղի նորէն սիրեց ,
 Նորէն տուաւ խնդագին ,
 Նոր զաւակներդ լաճ ու աղջիկ ,
 Աշխարհ եկան շատ անգին :
 Նոցա բնական ձիրքեր տիպեր ,
 Գրով պատմել չե՛մ կարեր ,
 Ձոր շատ տարբեր մարդիկներէ ,
 Երկինք նոցա է շնորհէր :
 « Գեղ երեսուն որ չի ճառուէր ,
 Ձարմանալի էակացս ,
 Անշուշտ աչքով տեսնել պիտի ,
 Որ շատ դիտես դու ապշած :
 Տէր ողջ պահէ ու անվրաս ,
 Շո՛ւտ դաս աչքովդ տեսնես ,
 Երկնից հզօր յաջողութեամբ ,
 Նորատունկներդ վայելես :
 Յ.յԺմիկ չունիմ շատ գրելիք ,
 Միայն անգին Ձեր կենաց ,
 Կամ սպասու և բարեմաղթ ,
 Տիկին Յուիկ նուրիսեանց » :
 Մեր Սուրհանդակն միամիտ ,
 Մինչ իրիկուան նա կերթայ ,
 Կուզէ հանդիստ ընել պահ մի ,
 Զօրիսի Մաքս կիջնայ :

Ո՛ւր Շնոֆիկ հոն պատրաստ է,
Տեսնէ անոր գլուխ թուղթմ',
Շա՛տ կասկածի կերթայ եղեր,
Եւ կը հնարէ զայն խըլել:

Երբ գրատարն մեր խոնջեալ,
Աչերն կ'առնէ քուն մրափ,
Գաղտուկ Շնոֆիկ նամակ կառնէ,
Կ'կարդայ որ չէ՛ր ամրափակ:

Նախանձ դողումն զինք կը պատէ,
Թուղթ կը պատուէ մեմուարով,
Նորէն ուրիշ թուղթ մը կառնէ,
Ընդհակառակն գրելով:

«Ո՛րդի գաւա՛կս իմ՝ Մարտինոս,
Այս ի՛նչ սե էր մեր օրիկ,
Կինդ ծնաւ, վա՛հ կ'պագանծուիմ',
Երկու հրէշ, սե շնիկ»:

Նամակ դարձեալ գլխին դնելով,
Յպուշ մեր սուրհանդակին,
Եւ առտուանց անդէտ, կելլէ,
«Օրմ՝ շուտ հասնիմ՝ բանակին»:

Քանիմ՝ օրէն ուրախ զուարթ,
Թուղթ կը յանձնէ Մարտինոսին,
Երբ կը կարդայ արտասուքով,
Զինք կը թանայ սաստկադին:

Կը քսամինն նորա ոսկերք,
Ամօթ կղզայ իւր անձին,
Եւ փառք տալով բիւր դոհու թիւն,
Մեզ կը յանձնէ ստեղծողին:

«Իմ՝ մեղքերս դիտեմ՝ այո՛,
Այսպէս ահա հրէջներ,
Պիտի աչքիս ներկայանան,
Որ չ'ուղեցի՛ աշխարել:

«Այո՛՝ դիտեմ՝ զիս կը սիրէ,
Նախախնամօղն ամենից,
Որ չի թողուր զիս կորնչել,
Այսպէս խրատից անդարձիս:

Քարտէս կառնէ փոյթ ՚ի ձեռին,
Կ՛գրէ այսպէս սիրակաթ,
Շա՛տ սէր ողջոյն իմ՝ ծնողիս,
Իմ ամուսնոյս հարազատ:

Օրհնեալ է Տէր և իւր կամք սուրբ,
Որ զիս նայէ ակնթարթ,
Երբէք չ'լինի որ դուք տրամիք,
Այս են իմ բոյս և իմ բաղդ:

«Թող մեծանան երկու չնիկ,
Անոնք մեր տուն պահպանեն,
Այսուհետև, մայր բարուք ևս,
Զաւակացոս կնոջըս նայես»:

Պատասխանին կառնէ դառնայ,
Մեր Սուրհանդակ չուտափոյթ,
Կուգայ դարձեալ եղբորս Մաքս,
Երեկոյեան պահուն մութ:

Չար Շնոֆիկ անդ կ'սպասէ,
Սրտիւ ոգւով անհամբեր,
Մինչ վաստակած մեր Լրաբեր,
'Ի խոր 'իքուն է պառկէր:

Նամակ կառնէ կրկին դլխէն,
Արագօրէն կը կարգայ,
Այն ալ կ'պատռէ ընդհակառակն,
Այսպէս դրէ կեղծ նամակ:

«Շատ դեղեցիկ, թէ և Հրէշտակ,
Լինին, ինձի պիտոյ չե՛ն,
Պատասխանիս հասնելուն պէս,
Հանդերձ մարդըն թող նետեն:

«Ապա թէ ո՛չ երբ ես եկայ,
Տուն 'տի այրեմ՝ ձեօք հանդերձ,
Այդպէս ծնունդ ես չուղեցի:
Այդ ի՛նչ է, ի՛նչ լուր ավեղց »:

Մինչ պատասխան մեր նամակին,
Կըսպասէինք անհամբեր,
Եհաս ահա ժիր Սուրհանդակ,
Մեզ բօթ բերաւ սևաստուեր:

Երբ կարգացինք մեք այս նամակ,
Արտօսը լցաւ մեր աչքեր,
Գոռում գոչում և աղաղակ,
Աշխարհ երկիր կերերէր:

Ուրախութիւն մեր չափազանց,
Յաջորդեց սուգ տրամուլթիւն,
Լաց հեծեծանք և հառաչանք,
Չունին երբէք պատմութիւն:

Քաղաքն ամեն առ հասարակ
Մեր ապարանք դիմեցին.
Ով որ լէր կը զարմանար,
Ոււաղելով ասէին:

«Շատ մարդիկներ կը փափագին
Միայն մէկ հատ զաւակի,
Չեղի երկու տուաւ Աստուած,
Նման են պայծառ ակի:

«Մի՛թէ ասպետ Մարտինոսն խե՛ւ,
Որ զայս բարին չը յարգեց,
Չինչ անխոհեմ գրիչ էր այն,
Վաղվաղակի մահ վճռեց:

«Ահ, իմ Թոռներ անգին ակունք,
Հոգոյս հատորք սիրասունք,
Աչկունքս պիտի սեւով պատուի,
Երբ գուք երթայք հեռագոյն:

«Ա՛հ, իմ հարսնիկ, դու տարաբարդ,

Այլ չի պիտի տեսնեմ, քեզ,

Ա՛հ, աչքերըս թող խուարէր,

Ափսո՛ս սիրուն թռռնիկներս:

Այսուհետև գիշեր ցորեկ,

Իբրև զԲու գիշերի,

Պիտի գողամ պիտի կանչեմ,

Ահռելի ձայն վայ վայլի:

«Ա՛հ, երանի՛ շուտով օրհասս,

Գայր հասանէր վաղագոյն,

Գանի որ ես չէի տեսեր,

Հարսս և թռռունքս սխրագոյն:

«Ա՛հ, ի՛նչ ընեմ հրաման որդոյս,

Սաստիկ և դառն է վճիռ,

Դիմանալու չը կարողանամ,

Ի՛նչ ընեմ իմ երկու ձիւ:

«Ա՛հ, ի՛նչու իմ սենեակս վրաս,

Կերթայ կուգայ երերմամբ,

Ո՛հ, ուշս անցաւ կը մարիմ ես,


Աւաղ»:

Անտան իմ երկու ձագունքս,

Գրկիս վրայ կապեցին,

Ինձի տարան հեռու անհուն,

Դաշտի մը մէջ նետեցին:



Մինչ զիս նետեցին գիշեր էր,

Սեւան սեասուէր փռուած,

Սարեր ձորեր առ հասարակ,

Քօղ առած սեւաւորուած,

Նայիմ ասդիս անդին խաւար,

Յոյս սեւադէմ ահռելի,

Լեռներ դաշտեր և անտառներ,

Աչքիս ճիւղղ նկարուի:

Լուսնոյ քսանեհինգ էր գիշերս,

Տակաւին ուշ անադան,

Պիտի ցնցէ իւր լուսոյ ցայտ,

Անտառներու դարաստան:

Լճակներու մէջը ապրող,

Գորտերաց երգերու ձայն,

Խառնուեցան դաւակներացս

Ձայնին յիրար շփոթուեցան:

Շատ հեռուէն ոչխարներու

Պահապան դամիւրուաց ձայն,

Հաղիւ կը լսուէր ականջներուս

Նսեմ գիշեր ի մթան:

Երկնից կապոյտ շրջապատեալ
 Բազմաթիւ աստեղներով,
 Ո՛հ, Լուսին ալ ահա եկաւ,
 Կարծես թագուհի կառքով:

Իւր փառաց ճաճանչներ ահա
 Յայտեց անտառաց ծայրեր.
 Ուղեւորաց հանգիստ տալով
 Լուսաւորեց ճամբաները:

Ո՛հ, եղանակ աչնանային,
 Ցուրտ և սառն էր այս օրեր.
 Եւ իմ վիճակս կը յարմարէր,
 Եղանակէս չէր տարբեր:

Մինչ մարդիկներ ամենայն ոք,
 Սենեակներուն են քաշուած,
 Ծխնելոյզներ վառելով շա՛տ,
 Հաղիւ տաքնալ են կրցած:

Մինչ այս պահուս հանգիստ ունին
 Ամենք փետրալից մահճաց.
 Ընկողմեալ են և իւր խռան
 Անուշ քնով նինջ աչաց

Մինչ տղայքներ տաքուկ կերպով
 Օրօրոցներ կապկապած.
 Աչեր մեղմիկ առեր քնիկ,
 Բնաւ չունին ի զուր լաց:

Ա՛հ, ե՛ս, ե՛ս ալ մարդկանց սեռէն,
 Այս բաժինէն է՛ր զրկուած,
 Թշուառութեանս վերջը չի գար չ
 Տիւ և գիշեր ունիմ լաց:

Ո՛հ, ես մինակ որ լինէի,
 Տոկայի անտարակոյս:
 Բայց զաւակացս արցունքն ի՛նչպէս,
 Դադրեցունեմ ա՛հ, իմ Յոյս,

Բարէ թշուառութեանս իմոյ,
 Տղայքս կուլան կը մըսին,
 Եւ արտասուք նոցա անմեղ,
 Այրած սրտիս կը կաթին:

Միանգամայն և անօթցած,
 Ծիծ! կ'որոնեն բերանով,
 Դեռ կէս ամեայ են չեն կարող.
 Ստինքս գտնալ չուտ փութով:

Վասն այն յիրար խառնուելով,
 Ճիչ աղաղակ բարձեր են,
 Եւ տարաբաղբ մօրս ի տանջանս,
 Աղիք և սիրտք խարչատեն:

Մայրե՛ր մայրեր, դուք իմ վշտեր,
 Միայն գիտէք և կ'զգարք,
 Ծնողական դուժ և դորով,
 Դուք փորձած էք գիտէք յագ:

Երբ ես որովայնիս ծնունդ ,
Կ'տեսնեմ այսպէս վշտացած ,
Ալ ի՞նչ կ'լինիմ արդեօք թշուառս ,
Ողորմելիս մահացած :

Ա՛հ , զաւակունքս թող ես մեռնիմ ,
Ինձի պատուէր դադան չար ,
Ձեզ չ'տեսնայի այդ վիճակին ,
Սրտիկս նեղուէր չարաչար :

Երանի՛ թէ օրհասս հասնէր ,
Ինձի փակէր սև տաօան ,
Ձի լսէի ձեր ձայն ողորմ ,
Մինչ չը դիմանար վազրն անդամ :

Ա՛հ , թռչունքներ անասուններ ,
Դուք երջանիկ էք քան զիս ,
Կ'դդուէք սիրէք ձեր ձագուկներ ,
Եւ կերակրէք կշտապինտ :

Ձեր ձագուկներ ե՛րբ ճիճխան ,
Շուտ կերակուր հասցունէք ,
Եւ մանկական հոցս օրեր ,
Գուրգուրալով սնուցանէք :

Ես ի՞նչ ընեմ ձեռք ալ չունիմ ,
Ձաւակներս ցրտէն սառած ,
Գո՛նէ դդուեմ սրտիս վրայ ,
Շունչ տալով ընեմ տաքցած :

Ողորմելիս ի՞նչպէս անեմ ,
Ձեռք որ չունիմ խնամեմ ,
Ձագուկներացս բերաններին ,
Գո՛նէ լսկ ծըծուերս դնեմ :

Վասն այն աղիքներս խորովի ,
Սաստիկ ցաւէն իմ սրտիս ,
Ո՛հ , դու՛քս արդէն զիս մեռցնէ ,
Արցունք ծով է՛ աչքերիս :

Ա՛հ , Երկինք Երկինք ալ հերիք է ,
Ձե՛մ դիմանար վշտերուս ,
Լալտա աչքք քեզ կաղաչեմ ,
Ճարմ՛ արա զաւակներուս :

Ե՛ս մեղաւոր իմ դադաթիս ,
Թափէ բարկութեանդ բաժակ ,
Անմեղ տղաքներս ազատէ ,
Քեզ հառաչեմ ըղձակաթ :

Այո՛ , դիտե՛մ արդար ես Տէր ,
Իմ մեղքերուս համեմատ ,
Կամիս պատժել ինձի արագ ,
Ձագուկներուս ի՞նչ մեղ արդ :

Գո՛նէ անմեղ տղաքներուս ,
Ձայնին լսէ Հե՛շտալուր ,
Եւ իմ այրած սրտիս համար ,
Յասմանդ դաւաթ յետս դարձուր :

Դաւիթին պէս « մեղայ » զոչեմ ,
Ո՛վ , որ Ծովդ եւ ողորմութեան ,
Աշխարհ սիրուես համայնդամայն ,
Կաթիլմ' չի՞ տաս ինձ դժուրութեամբ :

Անպառ Ովկիանոսէդ ,
Պապակիմ այրած սրտիւ ,
'Տի չանձրեւե՞ս ինձի պտիկմ' ,
Որ կաղաչեմ դիչեր տիւ :

Այո՛ , դիտեմ սրտադէտ ես ,
Կարգաս մահացուաց սրտեր ,
Իմ ալ կարդա՛ սիրտս կաղերսեմ՝ ,
Տե՛ս քոլորով է՛ դարձեր :

Ո՛հ , այս պահուս իմ ձագուկներս ,
Չայներ կտրած շնչասպառ :
Ողորմ՝ աչքով նուաղեցան ,
Կարծեցի մեռան իսպառ :

Վա՛հ , դաւկներս վա՛հ , դռուաղի ,
Գալարեցաւ աղիքներս ,
Գիտեմ իսկոյն ես մարեցայ ,
Խաւար պատեց չարս դիւերս :

Մէյնն ալ յանկարծ ոստեայ որ ի՞նչ ,
Տեսնեմ պալատ ահագին ,
Մէջն ամենայն բարութեամբ լի ,
Ի՞նչ սր ուզես կայ անդէն :

Տղաքներըս եւ ես մէկտեղ ,
Պատուպարուած նորա մէջ ,
Բնաւ երբէք եւ ո՛չ մէկէմ՝ ,
Չունիմ երկիւղ , եւ կասկած :

Որովհետեւ Առիւծմ՝ ահեղ ,
էր դռնապան պահապան ,
Ո՛չ ոք չ՛կարէր ինձ խուրթ եւ խոչ ,
Լինել , կայի անուասն :

Չեռներս ոտներս ինչպէս առաջ ,
Նոյնպէս այսօր ողջ տեսայ ,
Երկնից տուած բարիքներուն ,
Վրայ ես շատ սքանչացայ :

Ա՛րդեօք երա՛ղ է թէ իրօք ,
Ինձի պատեց տարակոյսս ,
Այսպէս երկու եւ երեք օր ,
Շատ արտորալս ինձ յայտնեց :

Որ իրաւցնէ էր ճիշտ , եւ ո՛չ ,
Երազ ունայն պահուճանք ,
Ուստի երեսս գետին դըրի՝ ,
Աղերսախառն պաղատանք :

Ես մատուցի երկնից շնորհաց ,
Բիւր գոհութիւն եւ աղերս ,
Բան զոր ինդրեմք եւ իմանամք ,
Արդէն բարւոք դու գիտես :

Արդարեւ ես թշուառականս ,
 Չեմ արժանի բարութեանս ,
 Սակայն դ'ու Տէր ես մարդասէր ,
 Անտես շառնես դինս արեանդ :

Յուսով սիրով բերկրեալ սրտիւ ,
 Ի՛նչ որ խնդրեմք մեք կառնեմք ,
 Թէ որ « Հայր մերի » մէջ ի՛նչ կայ ,
 Անոր համեմատ ուզեմք :

Հոս չորս տարի զաւակներովս ,
 Մէջ պալաախ անացի ,
 Փառք բարերար նախախնամին ,
 Պակասութիւն մ' չզգացի :

Իմ զաւակներս ուրախ զուարթ ,
 Սընան մինչև չորս տարուան ,
 Անոցքերս անոնց կը պատմէի ,
 Եւ կրթէի յերկիւղ Տեառն :

ԳՐՈՒԱԳ ՀՆԳԵՏԱՍԱՆՆԵՐՈՐԴ

Ամէն բանով ես ապահով
 Կեանք անցուցի աղօթիւք ,
 Պահքով Ծամով և արտասուօք ,
 Ձիս զսպեցի փոյթ ջանիւք :

Սակայն մի բան պակաս կար ինձ ,
 Այն էր սուրբ Ժամ եկեղեցի ,
 Ասոր համար դրեթէ օրերս :
 Հառաչելով անցուցի :

Ա՛հ , երբ լինի Եկեղեցիմ' ,
 Բահանայ մ' ես դմնայի ,
 Եւ իմ անթիւ դորձած մեղքերս ,
 Նորա առջին թափէի :

Պատարագի սուրբ տեսութեամբ :
 Հողիս հրճուէր և յնձայր ,
 Հաղորդութեամբ իմ Յիսուսին ,
 Բերկրեալ ուրախ միանայր :

Ամէն օր սուրբ եկեղեցի ,
 Սուրբ Պատարագ տեսանել ,
 Հողւոյն մարմնոյն շատ օգուտ է ,
 Մեղաց իւր լինի քաւեալ :

Կարճ օրինակ որ համադուխս ,
 Դու հաւատա՛ իմ խօսքին ,
 Զանա՛ որ մտահան չընես ,
 Տուած պատուէրըս անգին :

Ինչպէս մարմին պէտքը կ'ըզգայ ,
 Կերակուրի սննդարար ,
 Իոյնպէս հոգին սուրբ աղօթից ,
 Պատարագին հաշտարար :

Օր մը ելայ պատուհանէս ,
 Նայիլ լեռներ ու ձորեր ,
 Տեսնամ որ ի՞նչ նենդ Շնօֆիկ ,
 Պալատիս է մօտիկցեր :

Իրեն ձեռք կայ մի Աղանի ,
 Վիզը կտրուկ փետտուած ,
 Իմացայ թէ գայ խորովել ,
 Տանել և տալ իւր Տերանց :

Աիւծն ահեղ սարսափելի ,
 Մռմռալով ել դիմաց ,
 Զար Շնօֆիկն այլայլեցաւ ,
 Զըզեց գոյնը երեսաց :

Նշանացի մեր Առիւծին ,
 Իարձուցի տեղ ցոյց տալով ,
 Շնօֆիկն եկաւ , իւր Աղանին ,
 Զեռքը բռնած հեւալով :

Ասաց « Տիկին , դու վեհախառ ,
 Ծառադ քեզմէ աղերսէ ,
 Ներէ խորվեմ՛ այս Աղանիս ,
 Տանեմ Տիրոջս , զի ուշ է » :

Տէրըդ ո՛վ է , և ո՛ւր է նա ,
 Զի այս տեղեր ո՛չ ո՛ք մարդ ,
 Ոտք չը կոխեց այսչափ աստն ,
 Թ՛իւ ունենար սիրտ երկաթ :

« Տիկին բարի , ինչպէս ըսեմ ,
 Նա մինակ չէ՛ , շատ մարդ են ,
 Ելեր այս կողմ՛ կը պտտին ,
 Նպատակներն ուրիշ են :

« Մեծ Զօրիոս և իւր եղբարք ,
 Անդիպատրոսն և Մանկիկ ,
 Բոպարապետըն Դուլիէլ ,
 Եւ Մարտինոս իւր որդին :

« Զորս տարիէ որ կորոնեն ,
 Եւ ո՛չ մի տեղ չը թողին ,
 Դիտեմ՛ զուր է և չեն կարող ,
 Հասնել իրինց փափագին » :

Տէ՛ , կարճ կապէ , ահաւասիկ ,
 Աղանիդը այրեցաւ ,
 Առ տար Տիրոջդ , կյանդխմանուիս ,
 Արովհետեւ պահն անցաւ :

Երբ նա գնաց եւ թախծադէն ,
 Բեկեալ սրախ եւ բալով ,
 Ձիս Արարչին յանձն արարի ,
 Ըսի « Տէր Դու եւ կարող » :
 Իշերն անցաւ մէկալ առտուն ,
 Կրկին Շնոֆիկըն եկաւ ,
 Ասաց « Տիկին դու վեհափառ ,
 Ինձ ներեցէք խօսիմ բառմ » :
 « Երէկ պալլատդ եւ ձեր փառքեր ,
 Նկարեցի իմ տիրոջ ,
 Մանաւանդ ձեր շնորհաց ձիրքեր ,
 Պատմեցի մի ըստ միտջ :
 Տէրս եւ բոլոր պարագաներ ,
 Շատ զարմացան , ինձ տեսն ,
 Գնա մեզմէ « ողջոյն , սեր » ստար ,
 Ասա՛ կը ներէք դամբ ձեզի :
 « Լոկ տեսութիւնմ , ընենք փութով ,
 Ապա զնամք մեր ուղին ,
 Շնորհ ըրէք ինձ պատասխան ,
 Շուտ տի դատնամ առ տէրն իմ » :
 Պալլատս , եւ մենք , մեծ արքային ,
 Յօժարակամ նուիրեալ ,
 Բարեհաճին թող հրամեն ,
 Երջանկութիւն մեզ առթեն :

Մինչ Շնոֆիկ գնաց մեզմէ ,
 Քովս կանչեցի զաւաններս ,
 Ըսի , այսօր մեր թագաւոր ,
 Եւ Սպարապետ դան առ իս :
 Մինչ ձեմելով կուգան բազմին ,
 Իրենց բարձեր աթոռները ,
 Կերակուրէն յետոյ առիպէք ,
 Որ ես ձեզի բան պատմեմ :
 Մինչ իրիկուն Եղբարքս եւ այրս ,
 Կեսրայրս եկան չքապանծ ,
 Ուր եւ Շնոֆիկ ի միասին ,
 Մարդկութեան դիրան ու նեխածն :
 Ահ , մինչ տեսի եղբարքս սիրուն ,
 Սիրաս փլաւ անհամբեր ,
 Ուրախութեան արցունք լցուաւ ,
 Աչերուս զինչ լճակներ ,
 Փոյթ արցունքներս սրբեցի ,
 Ձիս զսպեցի զէտ արի ,
 Որ եկողներ չը կասկածին ,
 Ձիս տեսնելով թախծալի :
 Ելանք դիմաց մեծարանօք ,
 Ես եւ որդիքս սիրասուն ,
 Խոնարհութեամբ համբոյր տալով ,
 Շատ պատուեցինք զաւարթադոյն :

Այն ինչ նորա պատրաստուած .
Տեղեր կարգաւ բաղմեցան .
Եւ և որդիքս ձեռն ՚ի սրտի ,
Կայինք ՚ի օպաս յարդական :

Բոլորովին ապշած էին ,
Մեզ նայելով մեր գեղոյն ,
Եւ պալատիս շէնքին զարդին ,
Կային նորա զմայլուն :

Բարո՛վ եկիք , աղնիւ իմ Տեարք ,
Փախաբէի ձեր տեսոյն ,
Ա՛րդեօք ձեզ ո՞ր հողմը փչեց ,
Բերաւ անշուք իմ այս տուն :

Այո՛ գո՛հ եմք Ձեր ոտներէն ,
Որ չմուսցան մեզ իսպառ ,
Ձեր աղախնոյն այց ելանել ,
Ձի զլացան սիրալառ :

Մենք չքոտի և անմեծար ,
Վեհալիառացի չեմք արժան ,
Այլ կաղաչե՛մք ներող լինիք ,
Պակասութեանց մեր անձանց :

«Շա՛տ շնորհակալ եմք ու շատ գո՛հ ,
Ո՛ տիրուհի շնորհագեղ ,
Այդ ձեր բարի լեզուէն սրտէն ,
Որ կը բղխէ զինչ քաղցր մեղր :

«Եւ կը ներէք հարցունել ձեզ ,
Ձերդ վիճակնիդ . դուք ի՛նչպէս .
Կամ թէ զարմանք , այս պալատը
Առաջ չ՛կար , արդ ո՞րպէս :

«Մեզ կ՛երեի որ շա՛տ աղնիւ՛ ,
Ձարմէ . ցեղի սերունդ էք ,
Եւ ձեր դիմաց գեղոյն փայլմամբ ,
Մեր սրտեր շուտ կը գրաւէք :

«Այլ կաղաչե՛մք բարեհաճիլ ,
Չաւակօքդ հանդերձ նստիլ ,
Եւ մեզ համար փոյթ մի՛ տանէք ,
Արդէն մենք շատ հանդիստ եմք» :

Պէս պէս խօսքեր և առարկայք ,
Մենք խօսեցանք ճիշտ մի ժամ ,
Յետոյ ընթրեաց զարկի զանգակ ,
Ելան սեղան հրամեցան :

Ես զաւակունքս գօտի ածեալ ,
Սիրով նոցա պաշտեցինք ,
Եւ կերակուր ուտելէն վերջ ,
Իրենց տեղեր բաղմեցին :

Այնուհետեւ իմ զաւակներս ,
Եկան ինձի փարերով ,
«Մարէ մարէ մեռնիմք քեզի ,
Մի պատմութիւն ըրէ մեզի :

Զաւա՛կս, ո՛րդիրք, այսօր օր չէ՛ս
Որովհետեւ բարձր Տեա՛րք,
Նոր եկած են, կը խօսակցինք,
Ուրիշ օրուան թող կուտանք:

Ո՛չ ապարէն ձեզ շատ անգամ,
Հրահանդած եմ ընդարձակ,
Ամէն բանի յարմար ժամ կայ,
Եւ պատշաճից ժամանակ:

Տիկին, ըսին, «ձեզ կաղանջեր,
Ուրախութեամբ և սիրով,
Մտիկ կրնեմք ձեր պատմութեան,
Գիշերն անցնի ձեր քաղցր լեզուով:

«Եւ մանաւանդ սիրուն աղոց,
Սիրտ մի՛ կոտրեր մեզ համար,
Նոցա խնդիրք շուտ կատարէ,
Զի են փափուկ և մատաղ»:

Ներեցէք Տեա՛րք, օրովհետեւ,
Տղաքներս ոովորած են,
Պատմութիւնները լսելու,
Եւ ըղբօսնուլ միշտ անով:

Աի թագաւոր շատ բարեպաշտ,
Կունենայ չորս զաւակունք,
Երեքն արու մէկն ալ աղջիկ,
Խիստ գեղեցիկ զի՛նչ զուարթունք:

Այն թագաւոր ունի եղեր,
Սովորութիւն մի ազնիւ,
Կը կատարէր այս պաշտօնը,
Ամէնօրեայ իրիկուն:

Ինքը նստած իր աթոռին,
Մանչերն իրեն երկու կողմն,
Աղջիկ կերթար խոնարհութեամբ,
Կարգաւ ձեռաց տայր համբոյր:

Վերջ թագաւոր իրեն ծնկան,
Կը նստեցնէր այն աղջկան,
Քան աշխարհիս ամեն փառքեր,
Իւր դատրիկ շատ կը սիրէր:

Հօրը նման և եղբայրներ,
Կը սիրէին իրենց քոյր,
Գիշեր ցորեկ փափագէին,
Սրտամաշիկ անոր սիրոյն:

Այն բարեպաշտ հզօր արքայն,
Երբ հոգեվարքն էր հասած,
Կտակ թողուց իրեն որդուց,
Այսպէս օրէն հաստատած:

Դու հարազատ իմ անդրանիկ,
Ե՛րբ իմ տեղըս յաջարդես,
Այս իմ վերջին պատուերըս է,
Պիտի սիրով կատարես:

ինչպէս որ ես մինչև ցայսօր,
կատարեցի անյապաղ,
Դու ալ պարտիս զայն կատարել,
Ամէն իրկուն անդանդաղ:

Իմ սիրասուն աղջիկն ձեր քոյրն,
Մինչ իւր պաշտօնն կատարէ,
Պիտի կանչես ինչպէս որ իմ,
Քո աջ կողմ՝ սիրով բազմէ:

Այս՝ սիրով կատարեցին,
Եղբարքն ազնիւ և ընտիրք,
Եւ սիրեցին շատ չափազանց,
Իրենց քուրիկ գեղեցիկ,

Մինչև ցայս վայր որ պատմեցի,
Զգացին եղբարքըս հոգւով,
Զի իրարու միշտ նայելով,
Կային ապշած զարմանքով:

Եւ Սենեկապան թագաւորին,
Էր չար կրքոտ և մոլի,
Որ աղջկան մայրն, նաժիշաներ,
Իրմէն լկտի լլկուէին:

Աղջիկ կ'հասնի, տիս կատարեալ,
Սենեկապանն կասկածէ,
Իր չար արարք թագաւորին,
Աղջիկն գուցէ օրմ՝ յայտնէ:

Աղջիկ խոհեմ և խնաստուն,
Իր մօր պատիւ շատ կը սիրէր,
Նա ե՛րբ կըլլայ թագաւորին,
Եւ կամ այլում բան յայտնէր:

Թոյլ կուտար նա ժամանակին,
Որ ինքն իրմէն յայտնուի,
Եւ պատժապարտն իր արժանին,
Առնէ անդէն կորսուի:

Այս տեղ զգաց նենգ Շընօֆիկ,
Ասաց ելնեմ մէյ մ՝ դուրս դամ՝,
«Նստէ Շընօֆիկ նստէ նայինք
Այս տեղ շատ մը բաներ կան»:

Կասկածոտ չար սենեկապան,
Երկես աղջիկն զրպարտէ,
Երբեմնն ձին. օր մը շքնիկ,
Եղբօր որդին մեռուցանէ:

Այսպէս տնխիղճ սպաննումներ,
Աղջկան վրայ բարդերսով,
Մինչ եղբարքն կուտակցութեամբ,
Գործը իրեն յաճնելով:

Կասեն առ տար, մեր ձեռք չ'երթար,
Դու ի՞նչ կընես ալ ըրէ,
Զի մեք չ'կարեմք նրան պատժել,
Որովհետև մեր քոյրն է:

Կառնէ տանի խեղճ աղջկան ,
Մէջ մեծ դաշտիմ ահագին ,
Ձեռքեր ոտքեր անդ կտրելով :
Ձրգէ դառնայ խրախագին :

Աղջիկն անդէն շատ մը լալով ,
Գլորուէ այգի մը կերթայ ,
Գիշեր խաղող կուտէ գաղտուկ ,
Տիւ ծառերուն տակ մնայ :

Այդիի տէր կուգայ նայէ ,
Խաղողնէր թափթփած են ,
Ինք կը հսկէ քանիմ՝ գիշեր ,
Մինչև աղջիկ կը բռնէ :

Մինչ հասուցի իմ պատմութիւն ,
Այստեղ վսեմ վայելուչ ,
Կեսրայրս և Այրս գիտեմ զգացին ,
Իրար նայեն շատ ապուշ :

Բայց Ենօֆիկըն չար և նենգ ,
Գարձեր զի՛նչ արձան աղի ,
Երբեմն երբեմն կ'աճապարէ ,
Գուրս որ թուչէ ազատուի :

«Նստէ՛ Ենօֆիկ նստէ հոս շատ ,
Բաներ կայ դեռ խմանալու ,
Ոստոտելով կամիս փախչել :
Խուսափելով իբրև Լու » :

Կառնէ տանի իրեն պալատ ,
Փառաւոր զարմանալի ,
Անատեն շուտ արագօրէն ,
Տօն հարսանեաց կազմուի :

Մեմիջապէս Մունետիկ բարձր ,
Չայնով կանչէ ահագին ,
Վսեմ և մեծ Սպարապետ ,
Կը պսակէ իւր որդին :

Այս հարսանեաց հանդէս շքեղ ,
Կերպով եօթն օր կատարի ,
Որուն ներկայ եղեն թագւոր ,
Եւ իւր եղբարք սիրալի :

Բայց ի՞նչ օգուտ որ չեն ճանչնար ,
Իրենց քուրիկ աննրման ,
Որովհետև ոտներ ձեռներ ,
Չունէր , որով ճանչրնան ,

Միջոցմ՝ անցաւ , անդէն ահա ,
Կուռի զնացին անխափան ,
Ըսպարապետ և իւր որդին ,
Թագաւորէն էր հրաման :

Անոր անձեռն աղջիկ ծնաւ ,
Երկու սիրուն դաւակունք ,
Շուտ մը նամակ զրեն զրկեն :
Սուրհանդակով փութագոյն :

Շո՛ւտ տար բանակ վաղվաղակի,
Ուրախանան Հայր մեծ Պապ,
Այն լրատարն կերթայ կիջնայ,
Թագաւորի մեծ կրպակ:

Սենեկապետն խարդախութեամբ,
Պատուէ նոցա դրած նամակ,
Կը գրէ նորէն «երկու շնիկ,
Ծընաւ կինդ, լե՛ր դիտակ»:

Այրն միամիտ նա ի՞նչ գիտէ,
Գրրէ այսպէս ասելով,
Շատ աղեկ է խնամէք զանոնք,
Թող տունս պահէն ապահով:

Սուրհանդակն կրկին կուգայ,
Մաքսատուն կիջեանէ,
Սենեկապան այն դրած թուղթ,
Դարձեալ պատուէ և գրէ:

Տարէ՛ք հանդերձ իրենց մարբըն
Նետեցէ՛ք, ի՛նձ պիտոյ չեն,
Եւ ողբարով աւաղելով,
Տանեն մեծ դաշտ մի նետեն:

Երկինք գթաց այն խեղճերուն,
Հոյակապ կահ կարասեօք,
Տուաւ անոր զաւակներուն,
Ուր ապրին հաստատ յուսով:

Արդ, Զօրիոս վե՛հ թագաւոր,
Դուք Անդխաատ և Մանկիկ,
Իմ եղբարներն էք հարազատ,
Եւ ես քոյր ձեր Մարդարխ:

Եւ դու Դուլիէլ վսեմաշուք,
Անձնանուէր աննաման,
Դա ձեր որդին է Մարտինոս,
Իմ սէր, և այր պատուական:

Գիտեմ ասի էր Շնոֆիկ,
Որ դուք փորեց ինձ խորին,
Հոն թող կյնայ ըրածն զգայ,
Եւ վայվայէ իր անձինս:

«Այո՛, այո՛, բանքդ հաւաստի,
Քեղի համար շուրջ կուգամք,
Այս չորս տարի դադար չունիմք,
Մինչև գտաք զոր ցանկամք»:

Զարմանալի էր այս մեծ դիւտ,
Որ մարդոյ աչք չէր տեսէր,
Ի՞նչ ցնծութիւն և ի՞նչ զգուանք,
Եւ ի՞նչ հրաշք ետ մեղ Տէր:


Կարծեմ զրիչք տկարանան,
Այս հանդէսս նկարագրել,
Մրտով խանդով չափեն զգան,
Փա՛ռք վեր յերկինս առաքեն:

Անմիջապէս կառքով զօրքով,
կրկին տարան ապարանքս,
Շնօֆիկ և իմ մայրս Ալա,
Բարձրացուցին կախազան:

ԿՆԻՔ

ԿԱՂ, ԵՒ ՅԱՄՐԱՒԱՅԼ Է ՃՄԱՐՏՈՒԹԻՒՆ,
ՄԻ ՅՈՒՍԱՀԱՏԻՐ ԼԵՐ ՄԻՇՏ ՀԱՍՏԱՏՈՒՆ:


Վ Ե Ր Ձ



Ո՞ր երբեմն թագուհի շքեղաշուք ոսկեճաճանջ
Փայլել Արփայն զօրէն 'ի կամարին հայաստանեայց,
Արեգակն ճառագայթեալ 'ի դուխս իմ անանիուռ
Լուսավառ շող փայլելով յաշխարհ սլատեալ մինչ այ-
րեմուտս,
Շքեղ ծփայր ծովուն 'ի ծիր ծայրն ծիրանի ծածա-
նելով,
Շրայեալ ոչք զուարթունք փախաբողացս հայիլ ի տես
Հիացեալ սրբ Հայ չէին, զի՞նչ այս, միթէ արեն եր-
կո՞ւ,
Մինն իյերկինս ումիյույն 'իյերկրի, Արեն երկրի,
ո՞հ ես էի:
Եղեմական սուրբ վայրերէս դետք յորդառատ քաղց-
րաբուզիս
Ուռզելով զաշխարհ սլատեն ծաղկունս ծնեալ զար-
մանազան
Փետայցս գահերն յոսկւոյ և զմտութեանց քանդակա-
գործ՝
Ձինչ Լուսին 'ի յեթերին և Աստեղունքըն շար 'ի շար,
Շափիւցրայթաղ 'ի գլխան, աղջայ բաղմաց նախան-
ձելի,
Անհամեմատ 'ի հողադունտս, չիք օրինակ համանման,
Հրաշտի իմ սրտատներս աղամանդեայ քարիւ յեա-
կուլ:

Չոր հոմանունն ճարտարապետքս նկարեցին չքնադա-
 պէս :
 Գրօշակունք Առիւծակիրք 'ի սրարտապ ծածանէին ,
 Օտար ազգացն ահեղասաստ ծիր յաղթութեան կարա-
 պետեալ :
 Փուշտիպանքն աստի անտի գահիցն խնց պատկա-
 ռագոյն ,
 Զարհուրեալ սարսափելով և ակնկոր ձեռն 'ի սրտի ,
 Նախարարք , հազարապետք , քաջ և ուշիմ խորհր-
 դականք ,
 Անձնանուէրք հաւատարիմք , զիս սահմանօք մեծա-
 ցուցին :
 Ոստանիկք իմ և սնկայք քաջիկ զօրքերս հայրենա-
 սէրս ,
 Արեամբ չափ նահատակեալ սլաշտպանելով զիս յօ-
 տարայ :
 Զաւակունքս իմ աննաման սուողջ , ուրախ կայ-
 տառ զուարթօ ,
 Գրկիս մէջ անանէին , բերրեալ սրտովքս ես խան
 դակովթ ,
 Չկարեմ թուել փառացս պերճանք , յորս ծփայի ես
 հեշտալի ,
 Ոչինչ յոտիցս մինչև 'ի զուխս պակասէր ինձ և ոչ
 մաղ մի :
 Բարէ սորս սահեալ խաբառ , այժմ իբրև՞ Բու ա-
 լերակի ,
 Վայ և ճիչ արձակելով 'ի սրարտապն ասարտանայ ,
 Չունելով զէթ ինչ դարմանն ցաւոցս խնց բխրա-
 ւորի ,

Բժիշկքս ամեն առ հասարակ յուսահատած 'ի թաքստի ,
 Աւաղ հիբոցս և իմ որդիքս արդէն եղեալ ցիրուցան :
 Մութ սրաշարեալ է բիր աչոցս խարխախելով կամ
 խաւարի :
 Գարձէք , դարձէք , սիրուն սրդեակքս , զիրկս մայ-
 բնի Հայաստան ,
 Սրբելով դարսօսր ձեր Մօր , աչկունքս բայցեն սիրա-
 վառ :
 Բայց և դասարկ ձեր դառնալով երբէք չզղամ խը-
 րսխաթիւն ,
 Այլ փախազեմ ձեր ընծայիցն , ցաւոցս առնել դիւ-
 բութիւն :
 Մէր , սէր , է իմ ընծայն ընտիր և քան զականս
 սրտուականս ,
 Եթէ սիրով դարձջիր առ իս , կենդանոցի Հայաստան :
 Դու որ երբեմն 'ի զիրկս քս Մօր օղս ծծէիր հոյ-
 բնեաց ,
 Է՞ր հեռացար , քաղցրիկ զաւակս , արդեօք զբեղ օո
 վարեաց ,
 Արդ նստեալ յ'Ուխտրի 'ի զքոսովայրն Գանտիլի ,
 Ըղբերան իմ դու փոխ առեալ հեկեկաս , ըստ , ցաւալի
 Չայն արձակեալ հառաչելով ուժգինս հնչեալ զինչ
 գոչես
 Աչկունքդ բայց և եկ 'ի քեզ , ս'հ և դու այդր սրան-
 դուխտ ես :
 ՀԵՂԻՆԱԿՆ



Վ Ր Թ Պ Ա Կ Ք

Էջ	ՏՈՂ	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
4	3	Ստիկ ստիկ	Ոտիկ ստիկ
5	2	Կայծած	Կայնած
5	5	Սրտասուքս	Սրտաս. ձեր
5	20	Կ'աղբեցան'	Չ'աղբեցան
9	3	Սաես	Սրես
9	14	Չափեաց	Չափոց
11	20	Երանութիւն	Երանութեան
15	24	Շահ հաղար	Չահ հաղար
17	2	Գխտէ	Գխտէ
19	9	Զգացեր	Զգացիր
21	9	Բարկինս	Մարկինս
22	12	Չի	Չի
22	23	Սկայից	Սկամայից
24	5	Գարեր	Չարեր
24	12	Չինջ	Ճենճ
26	15	Պատէր	Պատակր
34	16	Բարս	Բարի
38	18	Մեկ	Մեծ
45	24	Ան	Ան
55	24	Չարմայմամբ	Չայրայմամբ
70	4	Մըս	Մը
82	5	Չատ	Շատ
88	8	Կնթող	Կոթող
88	13	Եղարարըս	Եղայրըս
99	4	Ուրախութիւն	Ուրախութեան
101	2	Սեան	Սուան
101	6	Յոյս	Յոյժ
119	19	Կուսակցութեամբ	Կարեկցութեամբ

« Ազգային գրադարան



NL0108799

